Azg
armenian daily
19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1997 ՈՒՐԲԱԹ # 243 (1497)

ԱՄՆ հայկական կազմակերպությունները բողոքել են Քլինթոնին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. Ամերիկայի հայկական 13 կազմակերպություններ համատեղ կոչով դիմել են ԱՄՆ նախագահ Քլինթոնին ընկելու Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում Ադրբեջանի շահերն արտահայտող ԱՄՆ կառավարության խաղաթղթերը:

Նամակում ասված է. «Ամերիկյան կառավարության խաղաթղթերը խաղաղության գործընթացը առաջ մղելու փոխարեն, դժբախտաբար, խարխլել է այդ գործընթացը: Որպես Ամերիկայում հայկական կազմակերպությունների դեկավարություն, մենք կոչ ենք անում մինչեւ Կոպենհագենում ԵԱՀԿ-ի գագաթաժողովը այդ անհավասարակշռությունը ուղղել՝ ընդունելով հետեւյալ սկզբունքները. 1. Արդարացի գործընթաց. Շտապացրել կարգավորման որեւէ պայմաններ: Լեռնային Ղարաբաղի բանակցություններում ԱՄՆ-ն պետք է լեզոք դիրքորոշում ընդունի:

2. Լեռնային Ղարաբաղի լիիրավ մասնակցություն. ԱՄՆ-ն պետք է պնդի Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը ԵԱՀԿ խաղաղության գործընթացի բոլոր ասպեկտներում եւ դիվանագիտական ինստիտուտներում՝ Կոպենհագենում եւ այլուր: 3. Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից կիրառվող շրջափակման վերացում: 4. Լեռնային Ղարաբաղին մարդասիրական եւ զարգացման նպատակով օգնության տրամադրում»:

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ

Ադրբեջանը եւ Ռուսաստանը սպառնում են կիրառել վետոյի իրենց իրավունքը

Դեկտեմբերի 18-ին Կոպենհագենում սկսվեց ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի 6-րդ ժողովը: Բացման արարողությունից հետո, որին ներկա էր Դանիայի թագուհի Մարգարետ Բ-ն, ընդունվեց օրակարգը: «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության թղթակցին ԱԳՆ-ի խոսնակ Արսեն Գասպարյանը հայտնեց, որ օրակարգում հետեւյալ կետերն են. ԵԱՀԿ գործող նախագահի՝ Դանիայի արտգործնախարար Նիլս Հելվեգ Պետերսենի ելույթը եւ միջխորհրդարանական վեհաժողովի նախագահի դիմումը արտաքին գործերի նախարարներին, որից հետո կսկսվեն արտգործնախարարների ելույթները: Օրակարգում է նաեւ ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի եռանախագահության զեկույցը, իսկ ուրբաթ օրն առավոտյան կընդունվեն նախարարական խորհրդի որոշումները եւ տեղի կունենա ժողովի փակումը:

Որոշումների վերաբերյալ Արսեն Գասպարյանն ասաց, որ քննարկվում են եվրոդայի անվտանգության խարսիայի նախագիծը, մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի հաստատումը եւ նրա գրասենյակի տեղակայումը, որը կլինի Վրաստանում, ԵԱՀԿ հաջորդ գագաթաժողովի հավանաբար Ստամբուլում անցկացման հարցը, ինչպես նաեւ մի շարք այլ հարցեր: Քննարկվում են նաեւ տարածաշրջանային հարցեր՝ Մոլդովայի, Վրաստանի վերաբերյալ: Արտգործնախարարների պլենար նիստին զուգահեռ տեղի ունեցող բոլոր բանակցություններն ու խորհրդակցությունները առայժմ դռնփակ են: Ինչ վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահության զեկույցին, դա ուղղակի 1997 թվականի հաշվետվությունն է, որը շաբ ընդհանուր բնույթ ունի եւ իհարկե՝ որոշում չէ:

Հինգշաբթի, կեսօրից հետո ելույթ ունեցավ Հայաստանի արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանը: Նա, ինչպես եւ Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովը, դեմ հանդես եկավ «կոնսենսուս մինուս մեկ» սկզբունքին: Ռուսաստանի արտգործնախարարը դեմ արտահայտվեց նաեւ ԵԱՀԿ խարսիայի նախագծի այն դրույթին, որտեղ նշվում է, թե ԵԱՀԿ անդամ երկրներն ազատորեն կարող են միանալ ցանկացած դաշինքի: Պրիմակովի հակաճառությունը, ըստ ամենայնի, բացատրվում է բալթյան հանրապետությունների ՆԱՏՕ-ի կազմ ընդունվելու հեռանկարով:

Հինգշաբթի երեկոյան ինտենսիվ բանակցություններ էին ընթանում ԵԱՀԿ Մինսկի խմբի եւ Հայաստանի ու Ադրբեջանի բանագնացների միջեւ եւ, ըստ «Ազատություն» ռադիոկայանի, Կոպենհագենում գտնվող դիվանագետները մասնավոր կարգով նշում են, որ Ադրբեջանը կրկին սպառնում է վետոյի ենթարկել Անվտանգության խարսիան, պատճառաբանելով, թե ի՞նչ անվտանգության մասին է խոսքը, երբ ԵԱՀԿ-ն չի կարողանում ապահովել իր անդամներից մեկի՝ Ադրբեջանի անվտանգությունը: Բացի այդ, հարեւան հանրապետությունը ցանկանում է կրկին պարտադրել Լեռնային Ղարաբաղի բանաձեւի իր նախագիծը: Սակայն Հայաստանի պատվիրակությունն էլ դատարկ ձեռքերով չի եկել Կոպենհագեն եւ ներկայացրել է իր նախագիծը: Այնպես որ Կոպենհագենում կարծում են, որ խուսափելով Ադրբեջանի կամ Հայաստանի վետոյից, ԵԱՀԿ նախարարների խորհուրդը հազիվ թե որեւէ որոշում կամ բանաձեւ ընդունի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ: Վետոյի սպառնալիքներ կան նաեւ այլ պետությունների, մասնավորապես Ռուսաստանի կողմից, որը սպառնում է կիրառել, եթե խարսիայի տեքստից չհանվի ԵԱՀԿ անդամ-երկրների՝ ցանկացած դաշինքին միանալու իրավունքի մասին բանաձեւը:

ՀՀ արտգործնախարարի ելույթը 2-րդ էջում

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Զբիգնեւ Բզեժինսկու կարծիքով, որոշ հայեր սկսել են հասկանալ փոխզիջման առավելությունը

Մ. Նահանգների նախկին նախագահ Ջիմի Քարտերի անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Զբիգնեւ Բզեժինսկին Փարիզում ֆրանսերեն իր «Մեծ խաղատախտակը» (Le Grand Echiquier) գրքի լույս ընծայման առթիվ հարցազրույց է տվել «Լը Մոնդ» թերթին, որը լույս կտեսնի այսօր, դեկտեմբերի 19-ին: «Ֆրանսիայի հավակնությունները օգտակար են Եվրոդայի եւ Մ. Նահանգների համար» խորագրի ներքո ընդարձակ հարցազրույցը առավելապես անդրադառնում է Եվրոդայում Ֆրանսիայի դերին եւ ֆրանկո-գերմանա-ռուսական հնարավոր դաշինքին, իսկ վերջում արծարծում է Եվրասիայում Ադրբեջանին վերապահված դերի եւ Հայաստանի հետ վերջինիս ունեցած հակամարտության հարցը:

Պատասխանելով լրագրող Ժան Քրոզի այն հարցին, թե ինքը հնարավո՞ր է համարում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների բարելավումը եւ տարածաշրջանում իրավիճակի կայունացումը, Բզեժինսկին ասում է, որ Ռուսաստանն օգտագործում է Հայաստանը որպես Ադրբեջանի դեմ ճնշման գործիք, ինչին նպաստում է Մ. Նահանգների անհետաքրքիր հաղթականությունը Իրանի նկատմամբ: Այս ժխտական ազդակների կողքին Զբիգնեւ Բզեժինսկին նշում է, որ Ադրբեջանում կայունության աղբյուրը հանդիսանում է նախագահ Ալիեւը, որը, սակայն, երիտասարդ չէ: Այս պայմաններում, ասում է հաղթաթղթը, որ միաժամանակ ադրբեջանական նավթի ամերիկյան լոբբիի դեկավար դեմքերից է, տեղի է ունենում օտարերկրյա ներդրումների հոսքը դեպի Բաքու, ինչը, նրա կարծիքով, բարերար ազդեցություն է գործելու այդ երկրի եւ տարածաշրջանի վրա: Դրա դիմաց, ասում է Բզեժինսկին, «Ի վերջո հայերը սկսեցին ընդունել, որ եթե Կասպյան ավազանը իսկապես բաց պիտի լինի, եթե տարածաշրջանն իսկապես բարգավաճ պիտի դառնա, ապա շատ կարեւոր է անմասն չմնալ այդ բարգավաճումից, ինչը մղում է որոշ չափավորական հայերի, որ նախատեսեն հակամարտության հաղթական լուծում, փոխզիջումների վրա հիմնված մի կարգավորում»:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԲՈՒՅՔԱՍԱՐՔ

Արթուր Գրիգորյան՝ հնգակի չեմպիոն

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ



Տաշքենդից ինձ զանգահարեց Ուզբեկստանի հայկական մշակութային կենտրոնի հիմնադիրներից ու դեկավարներից մեկը՝ Վալերի Բաբախանյանը, եւ հրճվանքը չթաքցնելով ասաց՝ շնորհավորում եմ: Դատելով ըստ ամենայնի, Վալերին համոզված էր, որ ես հիանալի գիտեմ, թե ինչ առիթով է ինձ շնորհավորում: Եվ երբ նա իր հրճվանքին ավելացրեց ինձ համար արդեն միանգամայն անհասկանալի «հնգակի չեմպիոն» բառերը, ես վճռականապես ընդհատեցի նրան. «Մի կարգին բացատրիր, թե ինչ է պատահել»:

Պատահել էր ինձ համար աներեւակայելի բան: Հայ բոքսամարտիկ Արթուր Գրիգորյանը դարձել էր պրոֆեսիոնալների մեջ աշխարհի հնգակի չեմպիոն: Իսկ ես առաջին անգամ էի այդ մասին լսում: Ես չափազանց լավ գիտեմ նման մարզական սխրանքի գինը: Միանգամից չհավատացի Վալերիին, թե աշխարհում գոյություն ունի հայ հնգակի չեմպիոն: Ես նույնիսկ անհարմար զգացի իմ երիտասարդ բարեկամի առջեւ: Ի դեպ, Վալերին ծնունդով Հաղորտի գյուղից է, որը նաեւ հորս ծննդավայրն է: Վալերին դարաբաղյան շարժման ակտիվիստներից է, Շուշիի ազատագրման մարտերի մասնակից: Նրան իմ կասկածներով չվիրավորելու համար խնդրեցի Տաշքենդից ինձ ուղարկել թերթերի կտրածներ Արթուր Գրիգորյանի մասին: Վալերին ասաց, թե օուտով կգա Երեւան եւ կբերի ոչ միայն թերթեր ու հանդեսներ, այլեւ տեսաժապավեն:

Տես էջ 7

Ցյունը կտեղա եւս մեկ օր

ԵՐԵՎԱՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. Հայաստանը խուսափեց Ռուսաստանի հյուսիս-արեւելյան, կենտրոնական, հարավային մասերը, Ուկրաինան, Մոլդավիան եւ այլ երկրների տարածքներն ընդգրկած կտրուկ ցրտերից, որ հետեւանք են Նովայա Զեմլյայի եւ Կարսկի ծովի շրջանի ցուրտ արկտիկական զանգվածներից ձեւավորված անտիցիկլոնի: Այնուամենայնիվ, դեկտեմբերի 17-18-ին Հայաստանում տեղաց առաջին ձյունը: Ինչպես հաղորդեց ՀՀ կառավարությանն առընթեր հիդրոօդերեւութաբանական վարչության պետ Գենադի Կոջոյանը, հանրապետության տարածքում ձյան տեղումները եւ ամպամածությունը Թուրքիայի շրջանում գտնվող ցիկլոնի ազդեցության հետեւանք են: Ըստ օդերեւութաբանների, Հայաստանում թույլ ձյունը կտեղա եւս մեկ օր, որից հետո եղանակը կպարզվի: Ամբողջ ձմեռվա ընթացքում օդի ջերմաստիճանը եւ տեղումների քանակը կպահպանվեն բազմամյա միջին նորմայի սահմաններում:

Ըստ «Թայմի» հարցախույզի, Ազնավուրը «հարյուրամյակի արվեստագետ» է

ՍՏՍՍԲՈՒԼ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. Ըստ թուրքական «Հյուրրիյեթ» թերթի, ամերիկյան «Թայմ» պարբերաթերթի կողմից «Հարյուրամյակի մարդը» անունը կրող հարցման արդյունքները մեծաթիվ հետաքրքրել են թուրք հասարակայնությանը, քանի որ հաղթական գործիչների ցանկը գլխավորում են Չերչիլն ու Աթաթուրքը: Ըստ «Հյուրրիյեթի», քվեների հավաքման ընթացքում Աթաթուրքը զբաղեցրել է առաջին տեղը, սակայն ԱՄՆ-ի հունական եւ հայկական լոբբիների գործունեության շնորհիվ ավելացել են Չերչիլին տրված քվեները, եւ վերջինս շրջանցել է Թուրքիայի հանրապետության հիմնադրին:

Տեղեկատվության վերջում թուրքական թերթը չի զլացել նշել, որ արվեստագետների ցանկը գլխավորում է հայազգի երգիչ Շառլ Ազնավուրը՝ ավելի քան 149 հազար քվեներով: Այս արդյունքը նույնպես, ըստ «Հյուրրիյեթի», ձեռք է բերվել հայկական լոբբիի ջանքերի շնորհիվ:

Նշանակվել են Գերագույն դատարանի նոր անդամներ

ԵՐԵՎԱՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ. ՍՐՍԵՊՐԵՍ. Դեկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահության թեկնածուի հաստատելու մասին, որի համաձայն Սերժիկ Ավետիսյանը եւ Հասմիկ Գեւորգյանը նշանակվել են Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանի նախագահության անդամներ:

ՇՐՋԱՆ

Թբիլիսին ծախսում է Հայաստանի համար նախատեսված գազը

ԹԲԻԼԻՍԻ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՐՍԵՊՐԵՍ. Թբիլիսին խիստ գերազանցում է բնական գազի սպառման սահմանված չափերը եւ այդ գերածախսը ծածկվում է Հայաստանի բաժնի՝ Վրաստանի տարածքով տարանցվող նրա գազի հաշվին, ինչը հարուցում է հայկական կողմի օրինական դժգոհությունը, Փրայմ նյուսի թղթակցին ասել է «Վրացատանգազարդի» գլխավոր տնօրեն Վանո Զազաշվիլին: Զազաշվիլու խոսքերով, Թբիլիսիի օբյեկտները օրական սպանալու են ոչ ավելի, քան 250 հազար խորանարդ մետր գազ: Սակայն հաղթն իրականում օգտագործում է մինչեւ 400 հազար խորանարդ մետր գազ:

«Դժվարությունները կապված են այն բանի հետ, որ թերավճարումների պատճառով դադարեցվել է գազի մատակարարումը գնորդ սուբյեկտներին,- ասել է Վ. Զազաշվիլին: Համապատասխանաբար նվազել է տարանցման վճարը «Վրացգազատրանսպորտին», ինչը դժվարություն է դրել ընկերությանը»:

«Վրացգազատրանսպորտը» չէր նախատեսել գազի գնում Թբիլիսիի համար, քանի որ մասակարարների հետ մատիր էին ինքնուրույն բանակցություններ վարել «Թբիլգազը» եւ Թբիլիսիի հաղթաթղթարանը: Բայց գործարքը չէր հաջողվել: Այսօր «Վրացգազատրանսպորտը» իրացնում է միայն տարանցիկ գազը:

Զազաշվիլին նշել է, որ եթե այդպես շարունակվի, ապա գազի գլխավոր մատակարար «ԻՏԵՐԳԱ» միջազգային կոնսորցիումն կարող է լիովին դադարեցնել մատակարարումը, ինչպես որ արդեն եղել է քանիցս:

ԱԶԳ

տեղական

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ

ՀՀ արտգործնախարարի ելույթը

Հարգելի պարոն նախագահող,

ԵԱՀԿ-ի գործունեության գործնական չափանիշներից մեկն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցված կարգավորմանն ուղղված Մինսկի համաժողովի եռանախագահների միջնորդությունը: Մենք բարձր ենք գնահատում այս հիմնախնդրում նրանց երկարաժամկետ եւ եռանդուն ներգրավումը: Այդուհանդերձ, գործընթացում դեռեւս չի արձանագրվել այն բեկումը, որը հիմնավորված հույս կներշնչեր մոտ ապագայում հակամարտության կարգավորման համար:

Անկեղծության ոգով, որը, հավատացած եմ, բնորոշում է մեր համատեղ աշխատանքը, կուզենայի հստակորեն ուրվագծել մեր տեսակետները երեք բնագավառներում. բանակցություններում իրական առաջընթացը խոչընդոտող խնդիրներ, անհրաժեշտ նախաձեռնություններ, որոնք կողմերին թույլ կտային բանակցություններում կառուցողական մասնակցություն ցուցաբերել եւ գործընթացն առաջ մղել, եւ այն հիմնարար բաղադրատարրերն ու սկզբունքները, որոնց վրա պետք է խարսխվի հակամարտության վերջնական լուծումը:

Լիսաբոնի գագաթաժողովում գործող նախագահողի հայտարարությունը լուրջ հարված հասցրեց խաղաղ գործընթացին: Այնմանով, որքանով կանխորոշում էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, այդ հայտարարությունը կողմերի համար իմաստազրկեց հետագա երկխոսության անհրաժեշտությունը: Լիսաբոնից հետո կողմերի միջեւ տեղի է ունեցել բանակցությունների միայն մեկ փուլ: Ի տարբերություն նախորդ Լիսաբոնյան կանխորոշումներ չունեցող բանակցությունների: Լիսաբոնյան հայտարարությունը ոչ միայն անհնարին դարձրեց կարգավիճակի շուրջ բանակցությունները, այլեւ չափազանց բարդացրեց միջանկյալ համաձայնության ձեւաչափերումը:

Այսուամենայնիվ, խոչընդոտը Լեռնային Ղարաբաղի հետ անմիջական բանակցություններից Ադրբեջանի հրաժարվելն է: Ավելին, Ադրբեջանը անգամ մերժում է որոշես լիիրավ կողմ ճանաչել Լեռնային Ղարաբաղը նրա իսկ կարգավիճակի շուրջ բանակցություններում: Ի հակադրություն այս իրողության, հետխորհրդային տարածքում ծագած զրեթե բոլոր հակամարտությունների դեպքում, հակամարտող կողմերից յուրաքանչյուրի ղեկավարները վարել են ուղղակի բանակցություններ: Մեկ անգամ եւս ընդգծելով ակնհայտը հավատացած ենք, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում ոչ մի համաձայնություն չի կարող ձեռք բերվել առանց բանակցություններում Լեռնային Ղարաբաղի անմիջական մասնակցության:

Ադրբեջանի կեցվածքը նավթային հարցերում հավելյալ խնդիրներ է հարուցում: Բարձրացնելով նավթից ընդհանուր տնտեսական օգուտ ստանալու հնարավորության եւ տարածաշրջանային զարգացման ու համագործակցության հարցերը, Ադրբեջանը միաժամանակ ցինիկորեն փորձում է նավթի գործոնն օգտագործել որպես ճնշամիջոց Հայաստանից միակողմանի զիջումներ կորզելու նպատակով: Նավթի գործոնը նաեւ էլ ավելի է կարծրացրել Ադրբեջանի դիրքորոշումը, հույսեր ներարկելով վերջինիս՝ հասնելու ռազմական գերազանցության հայկական կողմի նկատմամբ եւ լուծելու հարցը ուժային ճանապարհով:

Ադրբեջանի ռազմական մտադրությունների վկայությունը նրա սովորական սպառազինությունների զինանոցի շարունակական ուռճացումն է՝ ի խախտումն սպառազինությունների վերահսկման պայմանագրերի: Ադրբեջանը կոպտորեն խախտում է ԵԱՁՈՒ պայմանագրով եւ Վիեննայի փաստաթղթով սահմանված իր պարտավորությունները, այդ թվում նաեւ սպառազինությունների թույլատրված սահմանների նշանակալի գերազանցմամբ եւ իր տարածքի որոշակի շրջաններում ռազմական ուժերի ապակայունացնող կուտակումներով:

Այս ամենը տեղի է ունենում փոխադարձ զիջումների եւ խաղաղական կյանքի դրսեւորմամբ հակամարտության խաղաղ կարգավորման սկզբունքը որդեգրած Հայաստանի դիրքորոշման պայմաններում: Հայաստանի հստակ դիրքորոշմանը համարժեք պատասխանելու փոխարեն Ադրբեջանը փորձում է իրականացնել ծայրաստիճան տարբեր կազմակերպություններ անտեսելով, որ հակամարտության կարգավորման բանակցությունների միակ այանը ԵԱՀԿ Մինսկի համաժողովն է: Նա նաեւ ուժեղացրել է իր խարդավանքը ձգտելով բորբոքել հակահայկական կրքեր: Ասվածի տխուր օրինակ է վերջերս Թեհրանում տեղի ունեցած Իսլամական համաժողով կազմակերպության գագաթաժողովին Ադրբեջանի հղած դիմումը, ուր աղավաղվել են հակամարտության փաստերը եւ դրանց կրոնական երանգ է հաղորդվել:

Ադրբեջանի ոչ կառուցողական դիրքորոշումն իր բացասական անդրադարձն է ունեցել Լեռնային Ղարաբաղում՝ անվստահություն եւ կասկածամտություն սերմանելով միջազգային հանրության նկատմամբ, ինչպես նաեւ լրջորեն խոչընդոտել է միջնորդների ջանքերը: Արդյունքում, ակնկալվող սպառնալիքներից եւ հնարավոր վտանգներից պաշտպանվելու նպատակով, Լեռնային Ղարաբաղը առաջ է քաշել խիստ պահանջներ պարունակող որոշակի պայմաններ, որոնք պետք է սահմանորոշվեն նախնական բանակցությունները, եւ ոչ թե դրանց միջոցով:

Մինչ այս խոչընդոտների մի մասի վերացումը կախված է հենց հակամարտող կողմերից, մյուսները կարող են հաղթահարվել մեր համատեղ ջանքերով: Նախեւառաջ, ԵԱՀԿ հանձնարարում նրանց երկարաժամկետ եւ եռանդուն ներգրավումը: Այդուհանդերձ, գործընթացում դեռեւս չի արձանագրվել այն բեկումը, որը հիմնավորված հույս կներշնչեր մոտ ապագայում հակամարտության կարգավորման համար:

Անկեղծության ոգով, որը, հավատացած եմ, բնորոշում է մեր համատեղ աշխատանքը, կուզենայի հստակորեն ուրվագծել մեր տեսակետները երեք բնագավառներում. բանակցություններում իրական առաջընթացը խոչընդոտող խնդիրներ, անհրաժեշտ նախաձեռնություններ, որոնք կողմերին թույլ կտային բանակցություններում կառուցողական մասնակցություն ցուցաբերել եւ գործընթացն առաջ մղել, եւ այն հիմնարար բաղադրատարրերն ու սկզբունքները, որոնց վրա պետք է խարսխվի հակամարտության վերջնական լուծումը:

Լիսաբոնի գագաթաժողովում գործող նախագահողի հայտարարությունը լուրջ հարված հասցրեց խաղաղ գործընթացին: Այնմանով, որքանով կանխորոշում էր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, այդ հայտարարությունը կողմերի համար իմաստազրկեց հետագա երկխոսության անհրաժեշտությունը: Լիսաբոնից հետո կողմերի միջեւ տեղի է ունեցել բանակցությունների միայն մեկ փուլ՝ ի տարբերություն նախալիսաբոնյան կանխորոշում անենացող բանակցությունների: Լիսաբոնյան հայտարարությունը ոչ միայն անհնարին դարձրեց կարգավիճակի շուրջ բանակցությունները, այլեւ չափազանց բարդացրեց միջանկյալ համաձայնության ձեւաչափերումը:

Այսուամենայնիվ, խոչընդոտը Լեռնային Ղարաբաղի հետ անմիջական բանակցություններից Ադրբեջանի հրաժարվելն է: Ավելին, Ադրբեջանը անգամ մերժում է որոշես լիիրավ կողմ ճանաչել Լեռնային Ղարաբաղը նրա իսկ կարգավիճակի շուրջ բանակցություններում: Ի հակադրություն այս իրողության, հետխորհրդային տարածքում ծագած զրեթե բոլոր հակամարտությունների դեպքում, հակամարտող կողմերից յուրաքանչյուրի ղեկավարները վարել են ուղղակի բանակցություններ: Մեկ անգամ եւս ընդգծելով ակնհայտը հավատացած ենք, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում ոչ մի համաձայնություն չի կարող ձեռք բերվել առանց բանակցություններում Լեռնային Ղարաբաղի անմիջական մասնակցության:

Երեք շնորհակալություն

Առաջին շնորհակալությունը «Ազգ» թերթին, որը 1997 թ. Յուլիս 22-ի համարում տպագրեց «Հայոց տառերն անուն ունեն. Այբ, բեն, գիմ, դա...» վերնագիրը կրող մեր յոդուածը: Ինչպես ընթերցողը յիշում է, այդ յոդուածում մենք առաջարկել էինք վերջ տալ Մեսրոպեան այբուբենի աղճատուած ուսուցմանը, վերականգնել հայոց տառերի աւագանի անունը:

Երկրորդ շնորհակալությունը ՀՀ կառավարությանն առընթեր լեզուի պետական տեսչության լեզուամշակութային խաղաղականության բարձրագոյն խորհրդին, որը, ընդունելով մեր յոդուածը, արժեւորեց այն եւ համաձայնասխան առաջարկ ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարությունը:

Երրորդ շնորհակալությունը ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը, որն իր հերթին ընդունելով եւ արժեւորելով հայոց տառերի աւանդական անունը վերականգնելու առաջարկը, ՀՀ մարզային կրթության բաժիններին եւ հանրակրթական դպրոցների տնօրէններին յղեց յատուկ հրահանգ: Այդ հրահանգում ասուած է. «ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը յանձնարարում է՝ հանրակրթական դպրոցների առաջին դասարաններում համաձայնասխան աշխատանք կազմակերպել տառուսուցմանը զուգընթաց դրանց աւանդական անուանումներն ուսուցանելու ուղղությամբ տարեվերջին 1-ին դասարանն աւարտողների պարտադիր գիտելիք համարելով նաեւ հայերէնի այբուբենի իմացությունը աւանդական անուանումներով»:

Այսպիսով, փառք Ամենակալին, վերականգնուեց ազգային դաստիարակության կարեւորագոյն միջոցներից մէկը՝ Մեսրոպեան այբուբենի կատարեալ ուսուցումը: Այն վերացուած էր Խորհրդային Հայաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի 1922 թ. ընդունած «Ուղղագրության ռեֆորմից» ի վեր: Շարաբաստիկ մի «ռեֆորմ», որն այնպէս թանկ նստեց հայոց լեզուի բնականոն զարգացման ընթացքի վրայ, «ռեֆորմ», որի ամբողջական վերանայումը, յուսով ենք, առաջիկայում նոյնպէս պիտի արժանանայ պետական ուշադրության:

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆԵԱՆ
«Հայ դպրության» ընկերության
նախագահ

ԵՐԵՎԱՆ

Չինաստանի դեսպանը 1,5 մլն դրամ նվիրեց Նուբարաշենի մանկատանը

ՀՀ-ում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպան Յան Կեժունն իր անձնական միջոցներից 1 մլն 500 հազար դրամ (մոտ 3 հազար դոլար) է նվիրել Նուբարաշենի մանկատանը: Գումարը պարոն դեսպանը հանձնեց անձամբ՝ այցելելով Նուբարաշեն յուր տիկնոջ (միաժամանակ՝ դեսպանատան առաջին քարտուղար)՝ Ֆան Կեժունի ու ՀՀ նախագահի տիկնոջ՝ Լյուդմիլա Տեր-Պետրոսյանի ուղեկցությամբ:

Ինչպես մեզ հայտնեցին ՉԺՀ դեսպանատնից, վերջին երկու ամսվա ընթացքում սա երրորդ խոշոր նվիրատվությունն է: Գումարային նվիրատվություն է հատկացվել նաեւ թիվ 1 մանկական վնասվածքաբանության կենտրոնին, իսկ Հայաստանի պետական հեռուստատեսության «Լաբեր» ծրագրին տրամադրվել է բարձրորակ տեսախցիկ:

Ա. Գ.

Եկող տարվանից Հայաստանում՝ կանադական ավտոբուսներ

ԵՐԵՎԱՆ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՍՆՄԲԲ 1998 թվականից Հայաստանի ավտոճանապարհներին կհայտնվեն կանադական նոր ավտոբուսներ: Ինչպես հայտնեցին ՀՀ տրանսպորտային նախարարությունում, դա իրագործել հաջողվեց շնորհիվ նորաստեղծ համատեղ հայ-կանադական ձեռնարկության, որը մտադիր է նորացնել հանրապետության հնացած ավտոբուսային համալիրը:

Բացի այդ, ինչպես պարզաբանեցին նախարարությունում, շարունակվում են լիզինգային եղանակով ավտոմեքենաներ ձեռք բերելու նպատակով բանակցությունները այնպիսի խոշոր ավտոմոբիլ արտադրողների հետ, ինչպիսիք են «Մերսեդես-Բենցը», «Ռենոն», «Գազը»: Սակայն այստեղ ծագում է աշխարհի ավտոհսկաներին պետական երաշխիքներ տրամադրելու պահանջը, որը թերեւս անհնար է ներկայիս տնտեսական պայմաններում: Ճիշտ է, տրանսպորտային նախարարությունը պատրաստ է հաջորդ ֆինանսական տարվա պետբյուջեի իր հատկացումների 10 տոկոսը տրամադրել այդ երաշխիքներին: Սակայն այդ միջոցները խիստ անբավարար են: Նախարարությունում գտնում են, որ ստեղծված վիճակից ելք համատեղ ձեռնարկությունների ստեղծումն է եւ միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից վարկավորումը:

«Վաճառվում է երեխա...»

Առաջին ձյան հետ երեւան (ՀՀ կառավարություն) են եկել Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի մի խումբ բնակիչներ՝ բողոքելու գյուղապետ Աբով Գրիգորյանի դեմ, որը, նրանց խոսքերով, «շրջանցելով բոլոր օրենքները, ածող երիտասարդությանը բաժանելու համար 1990 թ. նախատեսված տնատեղ հողերը դրել-վաճառում է 1200-1500 դոլարով՝ ածուղի անվան տակ, իր անձնական շահերի համար»:

Ցուցարարները բողոքի յուրօրինակ (բավական տխուր) ձեւ էին ընտրել՝ վարչապետարանի գլխավոր մուտքի մոտ կանգնեցնելով 10-12 տարեկան 4 երեխաների՝ «վաճառքի-փոխանակման» առաջարկներ պարունակող ցուցանակներով. «Փոխանակվում է այս երեխան Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի 0,10 հա տնամերձ հողի հետ, 1500 դոլար չունենալու եւ ածուղին մասնակցել չկարողանալու պատճառով», «Վաճառվում է երեխա... Ներքին Գետաշենի գյուղապետարանից 0,10 հա հող գնելու համար», «Հանձնվում է այս երեխան ՀՀ կառավարությանը, քանի որ չկա 1500 դոլար՝ ածուղով տնատեղ գնելու համար» (ճիշտ եւ ճիշտ «ազատ» շուկայի ոգուն եւ տրամաբանությանը համապատասխան)...

Գյուղի բնակիչները դիմել են մարզապետարան, չգիտես ինչու՝ Ա.Ժ փոխնախագահ Արա Սահակյանին, սակայն, ապարդյուն: Դե, նրանք էլ եկել են կառավարություն եւ, դեկտեմբերյան ցուրտը դիմակայելով, փաթիլ-փաթիլ տեղացող ձյան տակ փորձում են «տեղ հասցնել» իրենց ձայնը:

Կառավարությունում ցուցարարների ներկայացուցիչներին ընդունել էին, երեւի՝ հուսադրել (ցավոք, չհաջողվեց պարզել, թե ինչ էին խոսացել նրանց եւ խոսացե՞լ էին, արդյոք, ինչ-որ բան), որովհետեւ շատ չանցած ցուցարարներն արդեն հեռացել էին՝ թերեւս «օրենքը շրջանցելու» գյուղապետի ախորժակը սանձելու հեռանկարով:

Լ. Գ.

Լոռու մարզում՝ շուրջ 2 տասնյակ ոչ կառավարական կազմակերպություն

Լոռու մարզպետարան էին այցելել միջազգային զարգացման գործակալության պատասխանատուներ Թինա Վուլֆը եւ Ռանդալ Հարբերգերը, որոնց ընդունեց մարզպետի տեղակալ Մայիս Խաչատրյանը:

Քննարկվեցին մարզի ոչ կառավարական, հասարակական կազմակերպությունների գործունեության ակտիվացման, համագործակցության հարցեր: Մարզի շուրջ 2 տասնյակ ոչ կառավարական կազմակերպություններ արդեն կարող են հատուցել աշխարհի ամենատարբեր նմանատիպ կազմակերպությունների հետ:

Ա. Ա.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է յուրաքանչյուր
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խմբագիր
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրէնութիւն / հեռ. 562863
Համակարգչային
ծառայութիւն / 581841
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն
վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՄԹԱՑԻԿ

Վարդանյանը լրագրողներին տեղեկացրեց, որ Grand Tobacco հայ-կանադական համատեղ ձեռնարկությունը Հայաստանում գրանցվել է 1997 թ. մայիսին, իսկ սիգարետ արտադրելու արտոնագիր տրվել է հուլիսի 24-ին: Ներկայումս գործարանի արտադրական հզորությունը կազմում է տարեկան 5 մլրդ սիգա-

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Grand Tobacco-ի տօրենը նախընտրում է սեփական ծխախոտը

Իսկ Արդյունաբերողների եւ գործարարների միությանն անդամակցելը համարում է աննպատակահարմար

Մամուլի ազգային ակումբի «Տնտեսական ուղեծիր» ծրագրի շրջանակներում դեկտեմբերի 18-ին ՄԱԿ-ի հասարակական տեղեկատվության սրահում լրագրողների հետ հանդիպեց Grand Tobacco հայ-կանադական ՍՊԸ համատեղ ձեռնարկության նախագահ Հրանտ Վարդանյանը:

rետ եւ 4 մլրդ ացետատային ֆիլտր: Աշխատակիցների թիվը 312-ն է: Ձեռնարկության հիմնադիրներն են ՀՀ-ի կողմից՝ ՍՊԸ ՌՌՌ 33 տոկոս փայաբաժնով, ՍՊԸ «Մամուն» 33 տոկոս փայաբաժնով, կանադական կողմից՝ Grand Tobacco՝ 34 տոկոս փայաբաժնով: 97 թ. երկրորդ կիսամյակի ընթացքում ոլետ է կատարի 3.2 մլն դոլարի ներդրում: Ցայսօր ներդրվել է 2650 հազար դոլար, որից 800 հազարը՝ շենքեր եւ սարքավորումներ, 1850 հազարը՝ հումք եւ նյութեր ձեռք բերելու համար: Ձեռնարկությունն այս պահին արտադրում է ծխախոտներ՝ «Ախթամար», «Երեւան», «ՌՌՌ», «Գառնի», «Էրեբունի», «Հայաստան», «Ուրարտու», «Մարս» եւ առանց ֆիլտրի «Ֆիրուխ» եւ «Պրիմա մոսկովսկայա»: Քառամսյա գործունեության ընթացքում ձեռնարկությունն արտադրել եւ առաքել է 720 մլն դրամի ապրանքի արտադրանք: Դեկտեմբերի 1-ի դրությամբ ձեռնարկությունը հարկերի տեսքով պետբյուջե է փոխանցել 174.5 մլն դրամ: Հայ-ռուսական գործարանների համաժողովի ընթացքում կնքվել են մի շարք պայմանագրեր Grand Tobacco-ի արտադրանքի արտահանման համար: Վարդանյանը ծխախոտի արտադրության մեջ է արդեն 25 տարի, տնտեսագիտական գիտությունների թեկնածու է, ինչպես նաեւ... 89 թ. Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի նախագահն է:

Լրագրողները տեղեկացան, որ խորհրդային ժամանակներում Հայաստանն արտադրել է տարեկան 150 հազար տոննա ծխախոտ, իսկ 97 թ. ընդամենը 180 տոննա:

Ֆրանսիա կատարած վերջին այցի ընթացքում Վարդանյանը հանդիպել է Ֆրանսիայի ֆիրմաների ներկայացուցիչների հետ, հանդիպումները եղել են արդյունավետ: Արդեն բասկետբոլի ֆեդերացիայի նախագահի կարգավիճակով Ֆրանսիայում Վարդանյանը հանդիպել է նաեւ ֆրանսիացի իր գործընկերոջ հետ, ստորագրել է համագործակցության եւ գնդակների պայմանագիրը (դրանք անվճար տրամադրվելու են Հայաստանի ֆեդերացիային):

Ինչ վերաբերում է Grand Tobacco-ին, առայժմ դրա հիմնադիր կապիտալը կազմում է 400 հազար դոլար, իսկ հումքը ամբողջովին ստացվում է արտասահմանից: Ծխակված ծխախոտը ստացվում է Վիրջինիայից (ԱՄՆ), Չիմբաբվեից, Իտալիայից, Իրանից, բարձրակարգ ծխախոտը մշակվում է Նորվեգիայում, իսկ ցածրակարգ ծխախոտը Իրանում: Գործարանի սարքավորումների մի մասը նախկին ծխախոտի գործարանին է պատկանում, մյուս մասն ադամանդի է կամերական կողքը: դրանք անգլիական եւ գերմանական արտադրության սարքավորումներ են: Ծխախոտների անվանումները որոշելու բացառիկ իրավունքը վերապահված է հայկական կողմին: Նվազագույն աշխատավարձը կանանց համար կազմում է 120 դոլար, տղամարդկանց համար՝ 150 դոլար, ամենաբարձր աշխատավարձը 1000 դոլար է:

Վարդանյանը «ցավոտ հարց» որակեց ներմուծվող եւ արտադրվող ծխախոտի ակցիզային հարկերի փոքր տարբերությունը (ներմուծվող 1 տուփ ծխախոտի ակցիզային հարկը 25 դրամ է, արտադրվողինը՝ 24): Մինչդեռ, ըստ Վարդանյանի, տարբերությունը պետք է մեծ լինի հօգուտ արտադրողի: Վարդանյանը նաեւ նկատեց, որ Հայաստանում տարածված «Բրիլիանտ» ֆիրմայի սիգարետը ցածրակարգ է, ժամկետանց, ընդհանրապես այդ ֆիրման միայն ԱՊՀ շուկայում է ազատ մուտք գործում: Լրագրողները տեղեկացան, որ հայկական ծխախոտում խեժի արտադրությունը 2-3 անգամ է գերազանցում արտասահմանյանից: Իսկ վատագույն նյութեր դարձնելիս է ոչ այնքան նիկոտինը, որքան խեժը: Վարդանյանը հավաստիացրեց, որ Grand Tobacco-ի արտադրատեսակները մրցունակ են:

Ի դատասխան մեր հարցի, թե Grand Tobacco-ն անդամակցո՞ւմ է Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությանը, տօրենն ասաց, որ աննպատակահարմար է համարում անդամակցել այդ կազմակերպությանը, որի օգուտն ու վնասը հայտնի չեն:

Անդրադառնալով ՀՀ տնտեսական օրենսդրությանը, տօրենը նշեց, որ օրենքներն այնքան հաճախ են փոփոխությունների ենթարկվում, որ տնտեսավարողն անգամ չի հասցնում դրանց ծանոթանալ: Ներքին շուկայում Grand Tobacco-ի հայկական արտադրատեսակները հիմնականում իրացվում են 2 ճանապարհով մեծածախ պայմանագրի կնքմամբ եւ գործարանի փոխադրամիջոցներով դրանք առեւտրի կետերին հասցնելով:

«Էրեբունի» եւ «ՌՌՌ» ծխախոտատեսակների հանձնման գինը 85 դրամ է, «Հայաստանինը»՝ 80, «Ֆիրուխինը»՝ 60, «Պրիմա մոսկովսկայայինը»՝ 50 դրամ:

Ի դատասխան «Հայոց աշխարհի» թղթակցի հարցին, թե ինքը Վարդանյանը, ի՞նչ ծխախոտ է նախընտրում ծխել, վերջինս դատասխանեց «Էրեբունի»: Թղթակիցն ուզեց հավաստիանալ դրանում, իսկ տօրենը սխալված եղավ վերարկուի գրպանից հանել եւ ցույց տալ «Էրեբունու» տուփը:

Նա ափսոսանքով նշեց, որ Ֆրանսիա մեկնած կառավարության դատվիրակության անդամներից հայկական ծխախոտ էր ծխում միայն արդյունաբերության եւ առեւտրի նախարար Գ. Նանագուլյանը, իսկ դատգամավորներից ոչ ոք (վարչապետն, ի տարբերություն ՀՀ նախագահի, չի ծխում), այն դեղորում, երբ ծխախոտի արակը, ըստ Վարդանյանի, «համադասխանում է պիջագային ստանդարտներին»:

Վերջում Մամուլի ազգային ակումբի հյուրը լրագրողներին առաջարկեց (եւ բաժանեց) Grand Tobacco-ի արտադրատեսակների նմուշներ:

Մեր կողմից էլ նշենք, որ լավ է չծխեք, բայց եթե ծխում եք՝ ծխեք միայն հայկական ծխախոտ: Սա եւս այն դեղորերից է, երբ դեղը ոլետ է անձնական օրինակ ցույց տա ոչ միայն գործարանի տօրենը, այլեւ ինքը ՀՀ նախագահը, մենք՝ հայրենական արտադրությունը խրախուսելու համար:

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Նախաամանորյա «ձկնորություն» Երեւանի փողոցներում

Զուտ աշխատավարձով գոյատեւելն այսօր հրաշքի պես բան է, մանավանդ, երբ վարձատրվում ես ոչ թե մասնավոր գործատուի, այլ հայրենի պետության մշտապես դատարկ գրպանից: Հայաստանի խաղաղաց նվազագույն զամբյուղի պարունակությունը (որ ուշադրավոր, կարծեմ, Լոնդոնի սննդի ինստիտուտի օգնությամբ վերջապես «գլուխ եկած» հաշվարկներով, չի գիջում 50 դոլարին) գոնե կիսով չափ լցնելու համար մարդիկ ստիպված են դիմել թույլատրելի եւ անթույլատրելի հնարքների գինանոցին՝ ակամա համայրելով սվերային տնտեսության ակունքներից սնվող «գործարարների» շարքերը: Բացառություն չեն կազմում, բնականաբար, ՆԳ աշխատակիցները, որ շատերի պես «քաջաբար» հաղթահարում են հայաստանյան ազատ շուկայի պայմաններում ընտանիք պահելու խոչընդոտները: Առավել եւս, որ ոստիկանի մասնագիտությունը «արտոնիկային» աղրելակերպի ավանդական, խորհրդային անցյալից հառնող առաձգական ներուժ ունի: (Ավելորդ է ասել, որ հետխորհրդային ժամանակների համատարած ալան-բալանը, օրինական եկամուտների սակավության զուգակցությամբ, ոչ թե սահմանափակում, այլ խթանում է խաղաղացիների «խակները» թեթեւացնելուն նպաստելու հակումները):

Իսկ [illegible]նի որ առջեւում հերթական «անցումային» Ամանորն է, ամանորյա սեղանների «հարդարանքն» էլ ոչ շարքային ծախսեր եւ դրանք ծածկելու ոչ շարքային ճիգեր է պահանջում, ի թիվս այլոց հավելյալ դրամական միջոցների տենդագին որոնումների մեջ են մեր պանծալի ոստիկանության աշխատակիցները, որ փորձում են «փող սարքել» հենց փողոցում, անցորդների երբեմն հետաքրքրասեր, ավելի հաճախ՝ անտարբեր հայացքների ուղեկցությամբ: Տարածված հնարք է, օրինակ, մանրավաճառների անտեղյակությունից եւ մայրաքաղաքի փողոցներում բացօթյա առեւտուրն արգելելու, սույն արգելքի հետաձգման վերաբերյալ ստեղ-ստեղ փոփոխվող որոշումներից օգտվելու տարբերակը:

Փողոցային առեւտրից շահաբաժին «քաղելու» մեխանիզմը պարզ է: մոտենում ես փողոցի մի հատվածում առեւտրի սրահի «մանրակերտը» փռած առեւտրականին (արմատական ընդդիմությունից խուսափելու համար ցանկալի է դիմել թույլ սեռի ներկայացուցիչներին) եւ, դեմքիդ լուրջ արտահայտություն տալով, առարկություն չընդունող, սպառնալից տոնով ասում. «Գիտեմ, չէ՞, որ փողոցում առեւտուրն արգելված է»: Եթե դիմացինդ հակահարձակման է անցնում՝ «Չորս կողմն առեւտուր են անում, եկար իմ բկին չոքեցի՞ր, բա եթիմներիս ո՞նց պահեմ» բնույթի անկասելի փաստարկներով, հոգ չէ: Ահաբեկման փուլից սառնասրտորեն անցնում ես հիմնական՝ բանակցային փուլին, չեղած արգելքին մատների արանքով նայելու խելքին մոտ գին առաջարկելով: Եթե «զոհդ» կուլ է տալիս խայծը եւ համաձայնասխան դրամական «փաթեթ» առաջարկում՝ լա՛վ, եթե համառում է, սարսափելի չէ. Ամանորը տոնելու միջոցների որոնումը շարունակում ես «փողոցն ի վեր» կամ «փողոցն ի վար», հարեւան փողոցում կամ հրապարակում: Քաղաքում ի՞նչն է առաջ՝ բացօթյա առեւտրի կետերն ու «կեցիկները»՝ չհերկած խոպան երիտասարդ եւ խոսուն-նալից ոստիկանական կադրերի համար:

Այնպես որ, դեռ կարելի է ապրել եւ Ամանոր տոնել՝ ծուկ որսալով անցումային ժամանակների պղտոր ջրերում...

ԼԵՎՈՆ ՊԵՊԼԱՆՅԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

«Ինտերկատը» շարունակում է աջակցել Արցախին

Ավելի քան հինգ տարի ՀՀ «Ինտերկատ» բարեգործական կենտրոնը պարբերաբար օգնություն է հասցնում Արցախ, որը նյութականից բացի՝ ունի նաեւ բարոյական մեծ նշանակություն:

Կենտրոնի պատվիրակությունը օրերս վերադարձավ Արցախից: «Ինտերկատի» տնօրեն Նորիկ Զուլոյանից տեղեկացանք, որ վիրահատական բանկարժեք սարքավորումները, բժշկական ջերմաչափերը, խալաթները, դեղորայքը, սպիտակեղենն ու սննդամթերքը, որոնք տրամադրել են Փարիզի ամերիկյան հոսպիտալի պատասխանատուներից մեկը՝ Ժան-Լիզ Թաբյանը եւ Բավարիայի «Նոյե-ուլմ» կարմիր խաչի ներկայացուցիչ Զիգֆրիդ Հեսմանսբերգերը, հանձնվել են «Ինտերկատ-Դարաբաղ» մասնաճյուղին:

Ի դեպ, «Մերսեդես» մակնիշի բեռնատարը, որով տարվել է օգնությունը, նվիրել է Գերմանիայում բնակվող վանաձորցի Արշալույս Վարդանյանը:

«Ինտերկատի» պատվիրակությունը Արցախում հանդիպումներ է ունեցել ԼՂՀ փոխվարչապետ Ժիրայր Պողոսյանի, Ազգային ժողովի նորընտիր նախագահ Օլեգ Եսայանի, Ստեփանակերտի համալսարանի ղեկավարության հետ, եղել Արցախի ազատագրված տարածքներում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մոտ ապագայում Ստեփանակերտ-Վանաձոր կապերը պատշաճական այցերով ամրապնդելու, փոխադարձ մշակույթի օրեր կազմակերպելու մասին:

«Ազգի» նախորդ հրապարակումներում բազմիցս խոսվել է արդեն յոթ տարի տնակներում գործող «Ինտերկատին» տեղ չհատկացնելու մասին:

Վերջերս հաղթահատեսարանը Վանաձորի կենտրոնական մասում «Ինտերկատին» հատկացրեց 350 քմ. մակերեսով տարածք, որ շուտով կսկսվեն վերանորոգման աշխատանքները:

ՄԱՐԻՆԵ ՄԻՐԶՈՅԱՆ

ԼՈՂ

Շինարարության տեմպերն աճում են

Ինչպես տեղեկացրին ԼՂՀ վիճակագրարչությունից, 97 թվականի տասը ամիսների ընթացքում ԼՂՀ կառավարության կապիտալ շինարարության վարչության ներդրումների փաստացի ծավալը գործող գներով կազմել է 691,2 մլն դրամ, ընդ որում դրա 57,1 տոկոսը բաժին է ընկնում կապիտալ շինարարությանը, իսկ 42,9 տոկոսը՝ վերականգնողական աշխատանքներին:

Նույն աղբյուրի տեղեկատվությամբ, նշյալ ժամանակաշրջանում կապիտալ ներդրումների ծավալն ըստ շինարարության եւ վերականգնողական աշխատանքների ցուցանիշների բնութագրվում են հետեւյալ տվյալներով. բնակարանային շինարարություն 164,9 մլն դրամ, ժողովրդական կրթություն եւ մշակույթ՝ 68,1 մլն դրամ, կոմունալ շինարարություն՝ 100,5 մլն դրամ, էներգետիկա՝ 6,8 մլն դրամ, զոհված ազատամարտիկների ընտանիքների, հաշմանդամների, պատերազմի մասնակիցների եւ բնակելի տների վերականգնում՝ 70 մլն դրամ, հանրապետական օբյեկտներ 50,6 մլն դրամ: Կապի օբյեկտներում վերականգնողական աշխատանքների ծավալը կազմել է 52,1 մլն դրամ, իսկ նախագծահետազոտական աշխատանքների եւ փորձաքննության համար ծախսվել է 36 մլն դրամ:

ԼՂՀ վիճակագրարչությունից նաեւ տեղեկացնում են, որ այս տարվա նոյեմբերի դրությամբ կապիտալ ներդրումների ծավալը ըստ Ստեփանակերտի եւ ԼՂՀ շրջանների բնութագրվում է հետեւյալ կերպ. Ստեփանակերտ՝ 324,9 մլն դրամ, Ասկերանի շրջան՝ 57,4 մլն դրամ, Մարտակերտի շրջան՝ 32,1 մլն դրամ, Մարտունու շրջան՝ 52,6 մլն դրամ, Հադրութի շրջան՝ 30,8 մլն դրամ, Շուշիի շրջան՝ 34,5 մլն դրամ, Շահումյանի շրջան՝ 6,6 մլն դրամ:

97 թվականի տասը ամիսների ընթացքում կատարված կապիտալային աշխատանքների ծավալը Լեռնային Դարաբաղում կազմել է 707,4 մլն դրամ, որից սեփական ուժերով՝ 617 մլն դրամ:

ՎԻԿՏՈՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱԶԳ

Բաղրամյան-100

1941 թ. դաժան ամառը կամ ճակատագրական դեմք Հովհաննես Բաղրամյանի կյանքից

1940 թ. հունվարին Կիեւի հատուկ զինվորական օկրուգի հրամանատար, բանակի գեներալ Գ. Ժուկովը նշանակվեց պաշտպանության Ժողկոմի գլխավոր շտաբի պետ: Նրա փոխարեն Կիեւի զինվորական օկրուգի հրամանատար նշանակվեց գեներալ-գնդապետ Միխայիլ Կիրպոնոսը: Հետագան ցույց տվեց այդ նշանակման ծանր հետեւանքները:

Օկրուգի շտաբի պետն էր գեներալ-լեյտենանտ Մախիմ Պուրկաեւը: Շտաբի պետի տեղակալը եւ օպերատիվ բաժնի պետն էր գնդապետ Հովհաննես Բաղրամյանը: Դեռ պատերազմը չէր սկսվել, սակայն առկա էին հակասություններ մի կողմից Կիրպոնոսի եւ ռազմական խորհրդի անդամ Նիկոլայ Վաշուգինի, մյուս կողմից Պուրկաեւի եւ Բաղրամյանի միջեւ, մի շարք սկզբունքային հարցերում:

Գերմանացիների առաջին օրվա հարվածի ուժը ահավոր էր: Զորքերը տեղ-տեղ նահանջեցին մինչեւ 50 կմ: Իր հզոր ուժը ցույց տվեց գերմանական տանկային բռունցքը, որ սեպաձեւ խրվում էր խորհրդային զորքերի պաշտպանության խորը:

Գերմանական ցամաքային զորքերի շտաբի պետ Ֆրանց Հալդերը օրագրում գրել է. «Հանկարծակիության տակտիկական բերեց նրան, որ ռուսների դիմադրությունը դարձավ անկազմակերպ, անջատ-անջատ, հետեւապես ոչ արդյունավետ»: Սակայն դառնանք Կիեւի զինվորական օկրուգին՝ հարավ-արեւմտյան ռազմաճակատին: Այստեղ կատաղի մարտ էր: Հունիսի 22-26-ը հարավ-արեւմտյան ռազմաճակատում էր բանակի գեներալ Ժուկովը՝ որոշ շտկումներ անելու ակնկալիքով:

Բաղրամյանը նշում էր այդ ծանր օրերին Ժուկովի հստակ մտածելակերպն ու կոնկրետությունը. Վերջինս «ռազմաճակատի հրամանատարության գործողությունները բավականաչափ վճռական եւ նպատակասլաց չէր համարում»: Մի քանի անգամ նա Կիրպոնոսին դիտողություն արեց երկրորդական խնդիրներին շատ ուշադրություն դարձնելու համար: Այդ ծանր օրերին թե՛ Պուրկաեւը, թե՛ Բաղրամյանը ոչ մի որոշ աչք չփակեցին: Հետագայում Ժուկովը գրեց. «Անհրաժեշտ է նշել շտաբի պետ Պուրկաեւի եւ օպերատիվ բաժնի պետ Բաղրամյանի սթափ միտքն ու կազմակերպչական սանչելի ունակությունները»: Իսկ նահանջը շարունակվում էր: Այստեղ սակայն կա մի բայց, զորքերը կռվում էին: Ճիշտ է, առաջին օրերին խուճապը սոսկալի էր: Մարդիկ շփոթահար չգիտեին ինչ անել երկաթյա արմադայի դեմ: Լեւ Տոլստոյը 1854 թ. գրել է. «Մարտերում անփորձ զինվորները նահանջել չեն կարող, նրանք փախչում են»: Հետագա օրերին գերմանացիները կատաղի դիմադրության հանդիպեցին: Բաղրամյանը անհրաժեշտ օգնության համար լինում էր ռազմաճակատի տարբեր բանակներում, հարյուրավոր օրինակներ էր բերում զորքերի խիզախության, անձնվիրության մասին: Այլ բան է, որ հակառակորդի ստրատեգիական, տակտիկական գիտությունը ճկուն էր, առավելություն ուներ խորհրդային սխեմաների նկատմամբ: Թշնամու տանկային միավորումները նետվում էին դեպի Կիեւ: Այդ օրերին տեղի ունեցավ մի իրադարձություն, որ արտաքուստ առանձնապես աչքի չզարնեց: Ռազմաճակատի հրամանատարը մինչ այդ էլ «անվստահ վերաբերմունք ուներ շտաբի պետ Պուրկաեւի նկատմամբ»: Ասում են, որ վերջինս խիստ անձնավորություն էր, ուղղամիտ, զուսպ, սակավախոս, բայց իր գործի հիանալի գիտակ: Թե՛ Բաղրամյանը, թե՛ աղագա մարշալ Մոսկալենկոն ժխտում են, որ նա չար մարդ է եղել: Գոնե Բաղրամյանը իր գրքի էջերում հարգանքով է խոսում իր պետի մասին: Իսկ Բաղրամյանը սուր աչք ուներ, դրան ավելացրած, նա ճշմարտությունն ու փաստերը իրենց իրական տեսքով ներկայացնելու պատասխանատու էր՝ բարոյական բիլոր չափանիշներով: Ռազմական խորհրդի նիստի ավարտին Մոսկվայից անսպասելի կարգադրություն ստացվեց. գեներալ Պուրկաեւին զորքերի հրամանատարի տեղակալ նշանակեցին Մոսկվա, զորակայանի տարածության տակ: Շտաբի պետը հասկացավ, որ իրեն ազատում են: Տարիներ անց ինքնակենսագրության մեջ Պուրկաեւը գրեց. «...Ազատման պատճառները ինձ հայտնի դարձան հետագայում: Ռազմաճակատի նախկին հրամանատար Կիրպոնոսը զեկուցագիր էր գրել, ինձ մեղադրելով իր դեմ մեքենայություններ սարքելու մեջ»: Կիրպոնոսը իր միջակ ընդունակությունների եւ թույլ պատրաստականության հետեւանքով ռազմաճակատում առաջացած ծանր իրավիճակի մեղավորին փնտրում էր ուրիշների մեջ, որ հիշեցնում է կկվի պատմությունը: Պետք է ասել նաեւ, որ Բաղրամյանը ուղղակի ոչինչ չի ասում Կիրպոնոսի՝ իր նկատմամբ տածած վերաբերմունքի մասին, սակայն հուշերից զգացվում է ռազմաճակատի հրամանատարի վատ թաքնված անբարյացակամությունը օպերատիվ բաժնի պետի նկատմամբ:

Կիեւի ճակատամարտը սկսվեց օգոստոսի 2-ին եւ գագաթնակետին հասավ 8-ին: Գերմանական հրամանատարությունը Կիեւը գրավելու համար 14 դիվիզիա նետեց նրա պաշտպանների դեմ: Կիեւի ամրացված շրջանը չնահանջեց: Օգոստոսի 16-ին գերմանացիները հետ քաշվեցին իրենց ելման դիրքերը: Պետք է արժանին մատուցել Կիեւը պաշտպանող 37-րդ բանակին: Ծանր կորուստներ կրելով նույնը նա փոխհատուցեց թշնամուն:

Օգոստոսի 22-ին գերմանական ցամաքային զորքերի հրամանատարությունը գաղտնի հրամանով կարգադրեց «Կենտրոն» բանակախմբի հարավային թեւը նախապատրաստել հարձակման՝ Գոմել, Ստարոդուբ ելման բնագծից դեպի հարավ, նպատակ ունենալով դուրս գալ Դեսնա գետի մոտ՝ աջ թեւով հարելով Չեռնիգովին: Դեռեւս հուլիսի 29-ին Ժուկովը Ստալինի ուշադրությունը հրավիրեց այդ ռազմաճակատում ստեղծված իրավիճակին եւ սպասվող վտանգին առաջարկելով թողնել Կիեւը: Շարունակվող զրույցը ավարտվեց Ժուկովի եւ Ստալինի հայտնի կոնֆլիկտով: Հետագայում, արդեն օգոստոսի 19-ին, Ժուկովը Ստալինին մի անգամ եւս զգուշացրեց հարավ-արեւմտյան ռազմաճակատին սպառնացող աղետի մասին: Իր պատասխանում Ստալինը «գիտակցում է» վտանգը, գտնում, որ եթե հնարավոր չլինի ոչնչացնել, ապա գոնե կկանգնեցնեն թշնամուն: Բայց գիտակցելուց ի՞նչ օգուտ: Օրերն անցնում էին, իսկ Բրյանսկի ռազմաճակատի հրամանատար, գեներալ Երյոմենկոյի՝ «առաջնորդին» տված խոստումը «այդ սրիկա Գուդերիանին» ջարդելու մասին չիաջողվեց կատարել: Այս բոլորով հանդերձ, Ստալինը լսել անգամ չէր ուզում Կիեւը թողնելու որեւէ միտք: Աղետը մոտենում էր: Սեպտեմբերի 2-ին գեներալ Գուդերիանի տանկային միավորումները հյուսիսում, Բրյանսկի ռազմաճակատի ձախ թեւում, ճեղքեցին 21-րդ բանակի պաշտպանությունը:

Վերջնականապես հրաժարվելով Կիեւի վրա ճակատային հարվածից, գերմանական հրամանատարությունը զորամիավորումների մի մասը ուղղեց հյուսիս, մյուս մասը՝ հարավ, դեպի 12 եւ 26-րդ բանակների թիկունք: Սեպտեմբերի 2-ին գերմանացիները ձեւացրին, թե գետանցման են պատրաստվում Չերկասիի մոտ: 38-րդ բանակի հրամանատար Ֆեկլենկոն կուլ տվեց խայծը, ուժերը կենտրոնացնելով այդ շրջանում: Գերմանացիները իսկույն ձեռնարկեցին գետանցում ավելի հարավից՝ Կրեմենչուգի մոտ եւ գետանցելով գրավեցին խաղաքը: Արդեն ոչ միայն ուրվագծվում, այլեւ պարզ տեսանելի էր թշնամու մտահղացումը՝ շրջապատել ամբողջ ռազմաճակատի զորքերը անցնելով նրանց խոր թիկունքը:

Սեպտեմբերի 9-ի ցերեկը զորակայանը թույլատրեց 5-րդ բանակին գետանցելու Դեսնան: Ուշ էր: Հենց սեպտեմբերի 9-ին գերմանացիները արդեն անցան Դեսնայի մյուս ափը: 5-րդ բանակը մնաց ամբանի մեջ: Սեպտեմբերի 10-ին Գուդերիանի հզոր տանկային բռունցքը հարվածեց 40-րդ բանակին. 40-րդ բանակը չդիմացավ:

Գերմանացիները գրավեցին Կոնոտոպը եւ սրընթաց, առանց արգելքի սլացան Ռյոմնի: Սեպտեմբերի 11-ին Կրեմենչուգից գեներալ Կլեյստի տանկերը շարժվեցին հյուսիս, միանալու Գուդերիանի տանկային բանակին: Այդ օրը Ստալինը Կիրպոնոսին կանչեց հեռագրի աղարտի մոտ եւ զորքերը հետ քաշելու կիսաս-պրաս, անընդունելի առաջարկ արեց: Փոխարենը «առաջնորդն» առաջարկում էր «մոլեգին գրոհներ», «խիզախ հակագրոհներ»: Այնինչ, գեներալ Ֆիլիպպին գրում է. «Հակառակորդի համառ դիմադրությունը Կիեւի շրջանում միայն նպաստում էր մեր օպերատիվ ստրատեգիական մտահղացումներին»: Ստալինի հեռագրի ավարտը Կիրպոնոսի համար դատավճիռ էր. «Դադարեցրեք վերջապես նահանջի համար բնագծեր փնտրել, այլ ուղիներ փնտրեք դիմադրության համար»: Կիրպոնոսի պատասխանը լիովին բնորոշում է այդ մարդուն. «Մենք զորքերը հետ քաշելու մասին մինչեւ անգամ չէինք էլ մտածում...»: «Կիրպոնոսն անսպասելիորեն հրաժարվեց այն բանից, ինչի մասին իշ առաջ խնդրել էր: Նրա կողմին կանգնածները անմիջապես դա հասկացան», հիշում է Բաղրամյանը: Իհարկե, Ստալինը եւս հասկացավ եւ իրեն հատուկ դաժան անզիջողությամբ ստիպեց Կիրպոնոսին խմել դառնության բաժակը մինչեւ վերջ. «...Հարավ-արեւմտյան ռազմաճակատի զորքերի հետքաշման առաջարկը գալիս է ձեզանից եւ ուղղության գլխավոր հրամանատար Բուդյոնուց... առանց զորակայանի թույլտվության Կիեւը չթողնել եւ կամուրջները չպայթեցնել»: Այսպիսով «առաջնորդը» մի անգամ եւս որոշում ընդունեց գերմանացիների օգտին: Այդ օրերին Բաղրամյանը գործուղվեց 38-րդ բանակ, որտեղից մեկնեց ուղղության նոր նշանակված հրամանատար, մարշալ Տիմոշենկոյի մոտ: Վերջինս Բաղրամյանին բառ առ բառ ասաց. «Գեներալ Կիրպոնոսին, ընկեր Բաղրամյան, զեկուցեք, որ ստեղծված իրադրության մեջ... միակ նպատակահարմար որոշումը կազմակերպված հետ քաշվելն է»:

Բաղրամյանը Տիմոշենկոյի բանավոր հրամանը (գրավոր չէր կարելի) ներկայացրեց ռազմական խորհուրդ: Խոսքը տանք Բաղրամյանին.

«Դուք գրավոր կարգադրություն հետ քաշվելու վերաբերյալ բերե՞լ եք, ասաց Կիրպոնոսը:

– Ո՛չ, մարշալը կարգադրեց բանավոր հաղորդել:

Կիրպոնոսը խիստ հոնքերը կիտելով սկսեց քայլել սենյակում: Հետո ասաց. «Ես ոչինչ ձեռնարկել չեմ կարող, մինչեւ փաստաթուղթ չստանամ, հարցը չափազանց լուրջ է»: Զարմանալի չէ, այդ մարդը ամբողջ կյանքում ղեկավարվել էր հրամաններով: Նա ոչ Ռոկոսովսկի էր, ոչ գեներալ Լուկին, ոչ գեներալ Պոպովով: Ի դեպ, դեռեւս հուլիսի 19-ին զորակայանը Ռոկոսովսկուն Մոսկվա կանչեց նոր նշանակում ստանալու: Վերջինս իր պարտքը համարեց ներկայանալ ռազմաճակատի հրամանատարին: Ռոկոսովսկին զարմացած նկատում է. «...Նա նկատելիորեն շփոթված էր եւ դա զգալով, ջանում էր հանգստություն պահպանել, որ նրան չէր հաջողվում: Իմ կարծ զեկույցը՝ 5-րդ բանակի պաշտպանության տեղամասի մասին, նա մտացրիվ էր լսում, կամ էլ հաճախակի ընդհատելով, մոտենում լուսամուտին. «Ինչով է զբաղված հակաօդային պաշտպանությունը, ինքնաթիռները թռչում են, իսկ ոչ ոք չի խփում... խայտառակություն է»: Այո, նա իրեն կորցրել էր, որովհետեւ մեկ այլ հրամանատար այդպիսի ծանր իրավիճակում, իմ կարծիքով, ՀՕՊ-ի մասին ժամանակ չէր ունենա մտածելու: Ճիշտ է, նա հրամաններ էր տալիս ինչ-որ մեկին, «վճռական հակահարվածներ» հասցնելու, բայց այդ բոլորը հնչում էին անվստահ, անհասկանալի: Հեռախոսով հրամայելով մարտի նետել ոչ այն է մեկ, ոչ այն է երկու դիվիզիա, հրամանատարը նույնիսկ չէր հետաքրքրվում՝ կարո՞ղ են արդյոք նշված միավորումները հակահարված կատարել: Այն տպավորությունն էր ստեղծվում, որ նա կամ չգիտեր իրավիճակը, կամ էլ չէր ցանկանում իմանալ: Այդ որոշումներին ես վերջնականապես եկա այն եզրակացության, որ այդ մարդու ուժերից վեր է այդպիսի տարողունակ, բարդ ու պատասխանատու պարտականությունները եւ վայ նրան վստահված զորքերին»: Դա հուլիսի 19-ն էր, իսկ սեպտեմբերի 17-ին ռազմաճակատը դժոխք էր հիշեցնում: «Զորքերը կռվում էին հյուսիսից հարավ, ծվածեւ ծգվող օղակում»: «Ռազմաճակատի համընդհանուր գիծ չկար»: Վերջապես սեպտեմբերի 18-ին կարգադրվեց թողնել Կիեւի շրջանը: Հրաման ուղարկվեց բոլոր բանակներին: Ուշ էր արդեն: Օղակը փակվել էր: Սեպտեմբերի 18-ի գիշերը ռազմաճակատի շտաբը Պրիլուկիից ճանապարհ ընկավ, ուղղություն վերցնելով դեպի Պիրյատին՝ Ուդայ գետի կամուրջ: Բաղրամյանը նշանակվեց վերջապահ ջոկատի հրամանատար:

Դադարներից մեկի ժամանակ որոշվեց հետագա ուղղությունը՝ Մոնգա գետի հոսանքով մինչեւ Չեռնուխի եւ գետի հաղթահարում: Մի քանի րոպե հետո Կիրպոնոսը իր մոտ է կանչում Բաղրամյանին եւ նոր առաջադրանք տալով, կարգադրում է շարժվել որոշված հակառակ ուղղությամբ: Բաղրամյանը պետք է ջոկատով գրոհեր կամուրջը եւ շարժվեր դեպի Սենչա: Իսկ խորհրդակցության ժամանակ բոլորը հավատացած էին, որ Սենչա տանող կամրջի մոտ գերմանացիները դարան են պատրաստել: Բաղրամյանը իրեն հատուկ պարզությամբ մտքում տարակուսում էր փոխված որոշման աթիվ եւ փորձում է հուշել հրամանատարին, որ իր ջոկատից հեռու չլինեն, գուցե ընթացքից իրենց հետ հաղթահարեն գետը: Բայց «...Կիրպոնոսը անհամբեր թափ տվեց ձեռքը, բարի, գնացեք, ընկեր Բաղրամյան»: Իրավ, Բաղրամյանի ջոկատը գրոհում է, ջախջախում թշնամուն եւ հաջող անցնում կամուրջը: Ըստ երեւույթին, ճակատագիրը տարբեր բան էր պատրաստել Բաղրամյանի եւ Կիրպոնոսի համար: Բաղրամյանին հատուկ է եղել օպերացիաների մանրակրկիտ մշակումը եւ տակտիկական բարձր պատրաստվածությունը: Ջոկատը շարժվում էր կողմնացույցով ու քարտեզով կողմնորոշվելով, հեռու բանուկ ճանապարհներից: Յուրաքանչյուր բնակավայրի, բաց տեղանքի մոտենալիս, ուղարկվում է հետախուզություն, կազմակերպվում շրջանաձեւ պաշտպանություն, գիշերը՝ վստահելի պահպանություն: Բնականաբար, Բաղրամյանին անհանգստացնում է շտաբի զորասյան ուշացումը: Ջոկատը բարեհաջող անցնում է Պսյոլ գետը, դուրս գալիս շրջապատումից եւ տեղեկանում ճակատագրական մարտամասներին: Բաղրամյան. «Ամենից առաջ ես հարցրի, թե շտաբի զորասյունը ինչու ուշացավ եւ չեկավ մեր հետեւից: Գլեբովը զարմացած նայեց ինձ. «Իսկ գեներալ Կիրպոնոսը ձեզ չի՞ զգուշացրել, չէ՞ որ Սենչայի ուղղությամբ ձեր ջոկատի ցուցադրական գրոհով նա հույս ուներ միայն շեղել հակառակորդի ուշադրությունը», նույն այդ ժամին զորասյունը պետք է շարժվեր հակառակ ուղղությամբ: Ուրեմն գեներալ Կիրպոնոսը՝ Կիեւի ճակատամարտի ողջ ողբերգության պատասխանատուներից մեկը, փորձում էր գոհաբերել իր շտաբի պետի տեղակալին իր կաշին փրկելու հույսով: Կիրպոնոսը պատահաբար չընտրեց Բաղրամյանին: Ամենից առաջ նա կանխակալ կարծիք ուներ որոշ անձանց մասին: Բացի դրանից, նա հոգու խորքում հավանաբար չէր մոռանում շտաբի պետ Պուրկաեւի հետ ունեցած սկզբունքային վեճերը, ում հետ համայա միշտ համաձայն էր Բաղրամյանը եւ եթե իր ճանապարհից հեռացրել էր Պուրկաեւին, որ այդ օրերի իրավիճակի համար կարող էր մեղադրել իրեն, ապա կար Բաղրամյանը:

Սեպտեմբերի 20-ին հայտնվելով Լոխվիցայից 15 կմ հարավ-արեւմուտք, շտաբի զորասյունը, որ բաղկացած էր 1000 մարդուց (որից 800 սպա), մեկ օր հանգստանում է: «Դժբախտաբար, առաջվա պես զգացվում էր ջոկատի անբավարար կազմակերպվածությունը: Պաշտպանական դիրքեր գրավում էր միայն զինվորական խորհրդի պահակախումբը...»: Իսկ գերմանացիները ճնշած չէին: Նրանք արդեն հայտնաբերել էին ռազմաճակատի շտաբը: Նրանք բազմիցս գերազանցող ուժերով շրջապատեցին զորախումբը:

Անողոք մարտում զոհվեցին Կիրպոնոսը, ռազմական խորհրդի անդամ Բուրմիստենկոն, գեներալներ Տուրիկովը, Պիսարեւսկին, գերի ընկավ եւ գնդակահարվեց դիվիզիոնային կոմիսար Ռիկովը: Ծանր կոնուզիայով գերի ընկավ գեներալ Պոպովը:

Վերջաբան

Գերմանական գեներալ Ֆիլիպպին գրում է. «Կիեւի ճակատամարտը կարող է ծառայել որպես ոչնչացման օպերացիայի դասական օրինակ»: Այդպիսի որակավորման համար կային բոլոր նախադրյալները: Ըստ Ֆիլիպպիի, գերվել էր 665 հազար մարդ: Մարշալ Մոսկալենկոն պնդում էր, որ այդ օրերին ամբողջ ռազմաճակատում կար մոտ 452 հազար մարդ: Խորհրդային պաշտոնական եւ ռազմամեմուարային գրականության մեջ ընդունվում է, որ Կիեւի ճակատամարտը թեեւ մեծ զոհեր պահանջեց, սակայն արդարացրեց իրեն այն իմաստով, որ խափանեց «Բարբարոսի պլանը» եւ հնարավորություն տվեց ժամանակ շահելու: Լավ, բայց կար նաեւ այլ տարբերակ, ավելի ընդունելի: Եթե Կիեւի շրջանի խորհրդային բանակները կազմակերպված նահանջեին ոչ թե սեպտեմբերի 18-ին, այլ ընդամենը 10 օր շուտ, ապա, ամենամեղմ հաշիվներով, չէր զոհվի 300 հազար զինվոր: Ինչ արած, Ստալինը կամ ընդունակ չէր, կամ չէր ուզում պատերազմել պակաս զոհերով:

ՌՈՒԲԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Դեկտեմբերի 17-ին Բրյուսելում ավարտվեց Հյուսիսատլանտյան դաշինքի երկրների հերթական խորհրդաժողովը: Նրա շրջանակներում տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանայի եւ Ռուսաստանի արտգործնախարար Եվգենի Պրիմակովի հերթական աշխատանքային հանդիպումը: ՌՖԻ-ին այդ հանդիպումն առթիվ իր հատուկ հաղորդման թեք ընդգծում էր, թե «չնայած Ռուսաստանն ու ՆԱՏՕ-ն ստորագրել են իրենց հարաբերությունները կանոնակարգող այսպես կոչված «Հիմնարար փաստաթուղթը», նրանց միջեւ պահպանվում են որոշ տարընթերցումներ ստորագրված փաստաթղթի մի շարք դրույթների մեկնաբանության շուրջ»:

Խոսքը մասնավորապես վերաբերում է ՆԱՏՕ-ական ռազմական ենթակառուցվածքներին, որոնք Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարները մտադիր են ծավալել իրենց նորանդամ երկրների՝ Արեւելյան Եվրոպայի նախկին խորհրդային ազդեցության գոտիների տարածքներում: Սոլանայի եւ Պրիմակովի ներկա բանակցությունների առանցքն է դարձել այն հարցը, թե Ռուսաստանն արդյոք վճռական ձայնի կամ «վետոյի» իրավունք ունի՞ այն դեպքերում, երբ ՆԱՏՕ-ն ցանկանա Լեհաստանի, Հունգարիայի կամ Չեխիայի տարածքներում ծավալել իր ռազմական ենթակառուցվածքները:

Ռուսաստանի անվտանգությանը լրջորեն սպառնացող այդ սկզբունքային հարցի կապակցությամբ, ինչպես եւ «էն գլխից» կանխագուշակելի էր, ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի մասնագետները տրամագծորեն հակառակ տեսակետներ ունեն: Առաջինների անվերապահ կարծիքով Ռուսաստանն այդպիսի իրավունք չունի: ՆԱՏՕ-ական գեներալները տարակուսանքով ուսերն են թոթվում, թե ինչո՞ւ պետք է իրենք Մոսկվայի բարեհաճությունը հայցեն, երբ, օրինակ, ցանկանում են Հունգարիայում ռազմավարական նշանակության կապի կենտրոն տեղակայել կամ Լեհաստանում վերակայել կամ Լեհաստանում վերանայեն, որոնք գործնականում ոչ մեկին ոչինչ չեն պարտավորեցնում: Եթե ընթերցողը չի մոռացել այդ փաստաթղթի ստորագրումից մեկ ամիս առաջ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը հերթական «շոնդալից» ցուցամոլությունն արեց, հայտարարելով, թե «փաստաթուղթը կստորագրվի մայիսի 26-ին, Փարիզում»: Ցնցակաթվածի մեջ գցելով իր դիտանակություն ունեցող խնդիրների լուծման գործում: Մանավանդ եթե նկատի առնենք, որ դա մեծապես առնչվում է նաեւ մայրցամաքի այլ երկրների, անգամ աշխարհի ճակատագրին: Չէ՞ որ ՆԱՏՕ-ի դեմի Արեւելք ծավալումը շեշտակիորեն փոխում է աշխարհաքաղաքական իրադրությունը, եւ ռուսները, ուզեն-չուզեն, հարկադրված են լինելու

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Մոսկվան խաղում է ելցինյան դիվանագիտության դառը պտուղները

ման առթիվ իր հատուկ հաղորդման թեք ընդգծում էր, թե «չնայած Ռուսաստանն ու ՆԱՏՕ-ն ստորագրել են իրենց հարաբերությունները կանոնակարգող այսպես կոչված «Հիմնարար փաստաթուղթը», նրանց միջեւ պահպանվում են որոշ տարընթերցումներ ստորագրված փաստաթղթի մի շարք դրույթների մեկնաբանության շուրջ»:

Խոսքը մասնավորապես վերաբերում է ՆԱՏՕ-ական ռազմական ենթակառուցվածքներին, որոնք Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարները մտադիր են ծավալել իրենց նորանդամ երկրների՝ Արեւելյան Եվրոպայի նախկին խորհրդային ազդեցության գոտիների տարածքներում: Սոլանայի եւ Պրիմակովի ներկա բանակցությունների առանցքն է դարձել այն հարցը, թե Ռուսաստանն արդյոք վճռական ձայնի կամ «վետոյի» իրավունք ունի՞ այն դեպքերում, երբ ՆԱՏՕ-ն ցանկանա Լեհաստանի, Հունգարիայի կամ Չեխիայի տարածքներում ծավալել իր ռազմական ենթակառուցվածքները:

Ռուսաստանի անվտանգությանը լրջորեն սպառնացող այդ սկզբունքային հարցի կապակցությամբ, ինչպես եւ «էն գլխից» կանխագուշակելի էր, ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի մասնագետները տրամագծորեն հակառակ տեսակետներ ունեն: Առաջինների անվերապահ կարծիքով Ռուսաստանն այդպիսի իրավունք չունի: ՆԱՏՕ-ական գեներալները տարակուսանքով ուսերն են թոթվում, թե ինչո՞ւ պետք է իրենք Մոսկվայի բարեհաճությունը հայցեն, երբ, օրինակ, ցանկանում են Հունգարիայում ռազմավարական նշանակության կապի կենտրոն տեղակայել կամ Լեհաստանում վերակայել կամ Լեհաստանում վերանայեն, որոնք գործնականում ոչ մեկին ոչինչ չեն պարտավորեցնում: Եթե ընթերցողը չի մոռացել, այդ փաստաթղթի ստորագրումից մեկ ամիս առաջ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը հերթական «շոնդալից» ցուցամոլությունն արեց, հայտարարելով, թե «փաստաթուղթը կստորագրվի մայիսի 26-ին, Փարիզում»: Ցնցակաթվածի մեջ գցելով իր դիտանակություն ունեցող խնդիրների լուծման գործում: Մանավանդ եթե նկատի առնենք, որ դա մեծապես առնչվում է նաեւ մայրցամաքի այլ երկրների, անգամ աշխարհի ճակատագրին: Չէ՞ որ ՆԱՏՕ-ի դեմի Արեւելք ծավալումը շեշտակիորեն փոխում է աշխարհաքաղաքական իրադրությունը, եւ ռուսները, ուզեն-չուզեն, հարկադրված են լինելու

կանգնել ռազմական բազաները: Նրանք գտնում են, թե դա բացառապես ՆԱՏՕ-ի ներքին գործն է եւ ենթակա չէ քննարկվելու որեւէ մեկի, այդ թվում՝ Ռուսաստանի հետ: Սակայն Մոսկվան, դատելով Պրիմակովի ակտիվ հակազդեցությունից, միանգամայն այլ կերպ է նայում նման հարցերին: Վկայակոչելով մայիսին Փարիզում Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ ստորագրված «Հիմնարար փաստաթուղթը», ռուսները ընդգծում են, թե այն նախատեսում է «վստահության արարողակարգեր», իսկ դա նշանակում է, որ իր անվտանգությանն սպառնացող հարցերում Ռուսաստանն իրավունք ունի պահանջելու, որպեսզի նորահայտ «գործընկերներն» իր հետ խորհրդատվական բանակցություններ անցկացնեն եւ անսան իր առարկություններին:

Հասկանալի է, Բրյուսելում Եվգենի Պրիմակովը հենց այդ ոգով է ներկայացրել իր առարկությունները Խավիեր Սոլանային: Իսկ վերջինս նույնական համոզիչ ու հիմնավոր կերպով մերժել է Մոսկվայի հավակնությունները: Ընդսմին, հետաքրքիրն այն է, որ երկուսն էլ ճիշտ են, Պրիմակովը՝ ըստ էության, իսկ Սոլանան՝ ըստ «Հիմնարար փաստաթղթի» տառի: Չէ՞ որ նրանում նման կարգի մասնավորեցումներ չկան, ընդհանուր բնույթի հայտարարություններ վանագետներին եւ հարուցելով ՆԱՏՕ-ի երկրների ղեկավարների անսփոթ զարմանքը, նա գորդյան հանգույցը սրի մի հարվածով կտրող Ալեքսանդր Մակեդոնացուն նմանակելով, «նշանակեց» իր երկրի համար ճակատագրական նշանակություն ունեցող փաստաթղթի ստորագրման թե՛ տեղը, թե՛ ժամանակը: Սակայն բացի էժանագին էֆեկտից, դա Ռուսաստանին ոչինչ չտվեց եւ, մանավանդ, որեւէ հիմնահարց մեկընդմիշտ չլուծեց, ինչպես մեծն Մակեդոնացու դեպքում: Արեւմուտքն օգտվեց Ելցինի «սահմանած» չափազանց կարճ ժամկետից եւ հասավ այն բանին, որ կողմերը չհասցրին հանգամանորեն քննարկել հենց այն (եւ բազմաթիվ այլ) հարցերը, որոնք այսօր են ջրի երես դուրս գալիս: Դրանք, բնականաբար, իրենց արտացոլումը չգտան փաստաթղթում, ինքը, փաստաթուղթը, չօժտվեց միջազգային պայմանագրերին հատուկ եւ կատարման համար պարտադիր իրավական ուժով, նույնիսկ չներկայացվեց Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի երկրների խորհրդարանների քննարկմանն ու վավերացմանը:

Եվ ահա այսօր Մոսկվան խաղում է ելցինյան այդ դիվանագիտության՝ դառը պտուղները: Սա մի ավելորդ ապացույց է, թե որքա՞ն վտանգավոր է հաղթեղությունը սեփական երկրի ճակատագրի համար բացառիկ ձեռնարկել հակախայլեր: Արդեն ձեռնարկում են (բազմաբեւեռ աշխարհի կոնցեպցիան ամենեւին պատահական չի դրվել շրջանառության մեջ): Իսկ այդ իրողությունն սպառնում է իր հորձանուտի մեջ առնել տվյալ խնդրի հետ առնչություն չունեցող շատ ու շատ ժողովուրդների, այդ թվում նաեւ հայերիս վաղվա օրը:

Իհարկե, տագնապ հնչեցնելու որեւէ լուրջ պատճառ դեռ չկա: Առայժմ չկա: Սակայն ո՞ւր է երաշխիքը, որ դա չի լինի նաեւ վաղը, երբ այլեւս «թամբին» չեն լինի ոչ Ելցինը, ոչ էլ «նրա բարեկամ Բիլը», որը խոստացել է ՆԱՏՕ-ի նորանդամ երկրների տարածքներում «օտարերկրյա զորքեր չտեղադրել»: Չէ՞ որ դա ընդամենը խոստում է, որը վավերացված չէ իբրեւ միջազգային պարտավորություն: Իսկ խոստումից նույնիսկ Քլինթոնը կարող է հեշտությամբ հրաժարվել, ինչպես որ տեսնում ենք Արեւելյան Եվրոպայի երկրներում ՆԱՏՕ-ի ռազմական ենթակառուցվածքներ ստեղծելու պարագայում, որի առթիվ, ի դեպ, հանուն ճշմարտության նշենք, որ Ելցինը նույնիսկ գլխի չէր ընկել խոստումը կորզել «իր բարեկամ Բիլից»:

Եվ նրա այս վրիպման դիմաց այսօր անհանգստանում է ոչ միայն Պրիմակովը:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Ամերիկյան բանկերը միաձուլման շեմին

Ի պատասխան շվեյցարական բանկերի միավորման

Շվեյցարական խոշոր «Յունիոն բենկ օֆ Սվիցերլենդ» եւ «Սվիս բենկ կորպ.» բանկերի միաձուլումը «Յունայտեդ բենկ օֆ Սվիցերլենդ» նոր ֆինանսական գերհամակարգի, որը կդառնա կառավարվող ներդրումային ֆոնդերի գումարով (912 մլրդ դոլար) խոշորագույնը աշխարհում եւ ակտիվներով (600 մլրդ դոլար) առեւտրական բանկերից երկրորդը, նպաստելու է ԱՄՆ-ի բանկային սեկտորում նոր խոշորացումների ստեղծմանը, գտնում է Ռոյթեր գործակալությունը:

1994 թ.-ից ի վեր, երբ բանկային միաձուլումների, դաշինքների եւ կլանումների խնդիրները վերջնականորեն դուրս եկան նահանգների ենթակայությունից, ԱՄՆ-ի բանկային սեկտորում գլոբալացման ու խոշորացման գործընթացը թափ ստացավ:

Շվեյցարական բանկերի վերջին միաձուլումը վկայում է միջազգային շուկայում արեւմտաեվրոպական ֆինանսական ինստիտուտների ոչ միայն աճող մրցունակության, այլեւ ԱՄՆ-ում դիրքերն ամրապնդելու ձգտման մասին: Մասնագետների կարծիքով, «Յունայտեդ բենկ օֆ Սվիցերլենդը», ավարտելով վերակառուցումը եւ միաձուլման գործընթացը, զգալիորեն կակտիվանա հենց Միացյալ Նահանգներում: Իր հերթին, Ուոլ Սթրիթում լուրեր են պտտվում մոտ ապագայում ամերիկյան բանկային եւ ֆինանսական այլ կառուցվածքների մեծաթիվ միաձուլումների վերաբերյալ: Մասնավորապես, նշվում է «Չեյզ Մանհեթթընի» եւ մեզ ծանոթ «Մերիլ Լինչի» հավանական միությունը, «Սիթիկորպի» հետաքրքրությունը «Գոլդմեն, Սաքս էնդ կոմպանիի» նկատմամբ, աշխարհում խոշորագույն ներդրումային լոնդոնա-հոնկոնգյան HSBC ֆոնդի եւ «Ուելս ֆարգո» ընկերության դաշինքի սերտացումը եւ այլն:

Ներդրումային ֆոնդերի կողմից կատարվող բանկային գործառնությունների շրջանակների ընդլայնումը նպաստեց նաեւ խոշոր բրոքերային ընկերությունների կլանմանը: «Ի տարբերություն նավթարդյունաբերության կամ հեռուստակապի ոլորտի, բանկային համակարգը հակամոնոպոլային հսկողության մարմինների մտահոգության առարկա չէ», նշում է փաստաբան Քր. Բելլինին: Ֆինանսների աշխարհում բոլորն այժմ վստահ են, որ ծննդյան տոներին կհետեւեն ամերիկյան բանկերի «ամուսնական» շահանդեսները:

Իշխանուհի Դիանայի եղբայրը ծարավի է վրեժի

Բուլվարային մամուլը վերսկսել է հարձակումը իր ամենապիտս հնարքի նկատմամբ

Կոմս Չարլզ Սպենսերն ամբողջ կյանքում ատել է բուլվարային մամուլը: Սակայն միայն մեկ անգամ նրան հաջողվեց արժանի պատասխան տալ. քրոջ՝ Դիանայի թաղման օրը, Վեստմինստերյան աբբայությունում: «Ես կարծում եմ, ամբիոնից հայտարարեց նա, որ Դիանան այդպես էլ երբեք չկարողացավ հասկանալ, թե ինչու նրա բարի, ուրախ մտադրությունները մամուլում մշտապես աղավաղված էին ներկայացվում: Այդ երեւույթի միակ բացատրությունն, ըստ իս, հետեւյալն է՝ բնական, անկեղծ բարությունը սպառնում էր մամուլի կողմից անձեռնմխելի՝ ժամանակավորապես:

Լրագրողները բերանները բացեցին միայն նոյեմբերի վերջին շաբաթում: Քեյփթաունի դատարանի նիստերի դահլիճում որոշվում էր 33-ամյա Չարլզ Սպենսերի եւ 32-ամյա Վիկտորիայի ամուսնալուծության հարցը՝ արարողությունը «տեղո՞ւմ» իրականացնել, թե՞ գործը փոխանցել բրիտանական դատարան: Հասավ հատուցման ժամը՝ տաբլոիդները մարտի մտան: «Ես երազում եմ եւ տեսնում, թե ինչպես եմ պատին դեմ տալիս այդ տիկնայինը», ասում է թերթերից մեկի խմբագիրը: «Ես տասներկու սիրուհի ունեի»: Նմանաբովանդակ հսկա վերնագրերով հոդվածները լցրել էին դեղին մամուլի առաջին էջերը (Սպենսերը կտրականապես հերքում էր մեղադրանքները): Ըստ այդ հոդվածների, կոմսն իբր այցելել էր իր սիրուհիներին այն ժամանակ, երբ կինը բուժվում էր ալկոհոլիզմից եւ սննդային նեւրոզից:

Վիկտորիա Լոկվուդը երազում է, որ ամուսնալուծության գործը ննվի նման հարցերում ավելի «շռայլ» բրիտանական դատարանում. նա գտնում է, որ Սպենսերը պետք է իրեն վճարի 5,5 մլն դոլար: Սպենսերը (կարողությունը գնահատվում է 167 մլն դոլար) ի պատասխան առաջարկել է 520 հազար դոլար, ինչպես նաեւ Քեյփթաունում գտնվող 500 հազար դոլար արժողությամբ ամուսնական տունը, սակայն Վիկտորիային դա հիչ է թվում: Նա իրեն դաշնակից է վերցրել Չարլզի նախկին սիրուհի Շանտալ Կոլլոմիին, որը դատարան է ներկայացրել կոմսի նամակները, ուր նա խոստովանում է իր տարդի ու անսիրտ վերաբերմունքը սեփական կնոջ նկատմամբ:

Իսկ այդ նույն ժամանակ կոմսը նոր ընկերուհի է գտել՝ ֆոտոմոդել Զոզի Բորեյնին: Սրա հարեւանները բողոքում են՝ երբեմնի խաղաղ Հաուք Բեյում այժմ վխտում են լուսանկարիչները: Տաբլոիդների խմբագիրները շեփորահարում են իրենց հաղթանակը: Սակայն սեփական տխուր փորձից նրանք գիտեն, որ Չարլզ Սպենսերը այն անձանցից է, ովքեր սովոր են ծիծաղել վերջինը:

«ՆՅՈՒՅՈՐՔ»

Հաշիմոտոն Ճապոնիայի տնտեսությունը փրկելու քայլեր է ձեռնարկում

18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, BBC. Ճապոնիայի վարչապետ Հաշիմոտոն անսպասելի հայտարարություն արեց շահութաբերության գանձումը 2 տրիլիոն իենով, այսինքն՝ ավելի քան 15 մլրդ դոլարով կրճատելու մասին: Երեկ 6,5 մլրդ դոլարով կրճատվել էին նաեւ կորպորացիաների վրա դրված մի շարք հարկեր: Հաշիմոտոյի խոսքերով, այդ միջոցառումները կօգնեն, որպեսզի Ճապոնիայի տնտեսությունն ապահովի, որի ճգնաժամը կարող է առաջացնել գլոբալ անկում: Հաշիմոտոյի ելույթից հետո Հարավարեւելյան Ասիայի շուկաներում արժեթղթերի կուրսը սկսեց բարձրանալ եւ նույնը կատարվեց այսօր եվրոպական սակարաններում:

Ադրբեջանցի ֆինանսիստը ահնվել է՝ հափշտակելով 7,5 միլիոն դոլար

ԲԱԿՈՒ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ. Ինչպես երեւում է Ադր[illegible] գործնախարարության աշխատակիցները մոտ ժամանակներս ստիպված կլինեն դիմել Ինտերպոլի ծառայություններին, որպեսզի կալանեն երկրի «Ներդրողական» շրջանային բաժանմունքներից մեկի տնօրեն Բաբար Հաջիեւին: Ինչպես հայտնի դարձել են երկրի դատախազությունում, 37-ամյա ֆինանսիստը անհետացել է՝ բանկի դրամարկղից հափշտակելով ահագին կա[illegible] Ինչպես պնդում են Բաքվի զանգվածային լրատվության մի շարք մի[illegible] վկայակոչելով խորհրդարանի աղբյուրներ, գումարը կազմում է մոտ [illegible] լար: Որոշ տեղեկությունների համաձայն, տնօրենն անհետացել է բանկի այդ բաժանմունքում հաշվարարական սուղգում անցկացնելու պահին: Այդ բանկը [illegible] սարկում է Բաքվի կենտրոնի խոշորագույն շրջաններից մեկը եւ միշտ էլ [illegible] կառելի է համարվել: Առայժմ պաշտոնական անձանց կողմից չհաստատված տվյալներով, ի թիվս ուրիշների իրենց միջոցներն այստեղ են կուտակում երկրի ֆինանսների եւ պաշտպանության նախարարությունները: Այդ ստուգման ընթացքում հայտնաբերվել էր պակասորդ ազգային արժույթով, որը համարժեք էր 350 հազար դոլարի: Հետաքննությունը չի բացառում, որ հենց դա էլ կարող էր բանկիրին դրդել փախուստի:

Նորվեգիան օտարերկրյա աշխատողների կարիք ունի

Նորվեգիայի աշխատանքի պետական վարչության վերջին գնահատականների համաձայն, եթե ազգային արդյունաբերության բուռն զարգացումը շարունակվի, ապա 1999-ից սկսած երկիրը տարեկան նվազագույնը 20 հազար աշխատողի եւ ծառայողի (խոսքը ներգաղթյալների մասին է) կարիք կունենա: Այսպես, այս տարի աշխատուժի շուկայում 60 հազար լրացուցիչ աշխատատեղ է բացվել: Ընդ որում գործազրկությունը իջել է [illegible] խիստ ցածր 2,6–2,8 տոկոսի: Նորվեգիայում շուտով բժիշկների, ինժեներների, բարձր որակավորում ունեցող արդյունաբերության ոլորտի աշխատողների եւ հյուրանոցային ու ռեստորանային սպասարկման մասնագետների մեծ պահանջարկ կլինի, տեղեկացնում է «Նյուզուիք» հանդեսը:

ԱԶԳ

Մշակույթ

Կարիկ Պասմաճյանի առեղծվածը

1988 թվականի հունիս-հուլիս ամիսներին Մոսկվայի Տրեյակովյան պատկերասրահում, իսկ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Լենինգրադի նշանավոր երմիտաժում կազմակերպված փարիզաբնակ Կարիկ Պասմաճյանի ռուսական արվեստի անձնական հավաքածուի ցուցադրությունը բառացիորեն ցնցել էր բազմահազար այցելուներին: Այդ օրերին ռուսաստանյան կենտրոնական մամուլը ողողված էր Պասմաճյանի հետ հարցազրույցներով ու հոդվածներով, որոնցում նրա հավաքածուի հանդեպ անսահման հիացումին զուգահեռ, անթաքույց չէր նաեւ զարմանքը, թե ինչպե՞ս Փարիզում աղրող երիտասարդ մի հայ կարողացել է հավաքել ռուսական արվեստի այնպիսի գլուխգործոցներ, որոնցից շատերը, հակառակ դրանք ունենալու անսահման ցանկությանը, տարիներ շարունակ անհաս էին մնում ռուսական նշանավոր թանգարաններին ու հավաքողներին:

Հիշում եմ, Լենինգրադյան ցուցահանդեսի բացման առիթով, երմիտաժի այն ժամանակվա տնօրեն Բորիս Պյոտրովսկին նման հավաքածուի ցուցադրումը անգամ երմիտաժի համար երեւույթ համարեց: Այո, այդ օրերին Կարիկ Պասմաճյանը գրեթե լեգենդ էր ռուսական արվեստասեր շրջանակներում: Հիացումը, մեծարանքը, պատրաստակամությունը, հաճոյախոսությունները ուղեկցում էին նրան, որտեղ էլ որ հայտնվում էր...

Իսկ ընդամենը մեկ տարի անց նույն մոսկովյան կենտրոնական թերթերն ու հեռուստատեսությունը տարածեցին սառը եւ կարճ մի հաղորդագրություն. «Հուլիսի 29-ին Մոսկվայում, չդարգված հանգամանքներում անհայտացել է ֆրանսիացի միլիոնատեր Կարիկ Պասմաճյանը»:

Հայաստանում Կարիկի բազմաթիվ ծանոթներն ու ընկերները անակնկալ լուրի խուճապի ու տագնապի մեջ անգամ անհեթեթության չափ անհարկի համարեցին նրա անվանը կցցրած «միլիոնատեր» բառը, որովհետեւ նրան կարելի էր տալ բազմաթիվ բնորոշումներ, ասենք բանաստեղծ (նա շուրջ յոթ-ութ բանաստեղծական ժողովածուի հեղինակ է), թարգմանիչ (նույնքան էլ թարգմանական գրքերի), արվեստաբան, արվեստի փորձագետ, վերջապես հավաքող, բայց ոչ երբեք միլիոնատեր, թեպետ նրա հավաքածուի յուրաքանչյուր գործ հնարավոր միլիոններ արժեր:

Պարզապես բանաստեղծորեն խենթ ու անսովոր, վառ ու հնարամիտ նրա կերպարին ոչ մի կերպ չէր համարեցվում դրամական չափանիշը...

Մինչդեռ այն, զուցե եւ ի սկզբանե հնարվել էր հասարակական կարծիքը բուն պատճառներից դեպի դրամական պարզ կողոպուտը շեղելու համար:

Ինչպե՞ս...

Հետո, ամիսներ շարունակ բազմաթիվ թերթեր տպագրում էին վարկածներ, վերջին ականատեսների վկայություններ, զանազան ենթադրություններ ու մեկնաբանություններ...

Հետո, հետո ամեն ինչ լռեց, այդ առեղծվածային, անհասկանալի, անընդունելի դեպքն էլ ծուլվեց առօրյա անցուդարձին, ռուսաստանյան եւ հայաստանյան բարդ, դժվար տարիների խառնաբափոթ համայնապատկերին ու... կամաց-կամաց մոռացվեց կորստի ցավը, անկարողության ճնշող ծանրությունը, երբեմն նաեւ հույսի թրթռները թողնելով միայն նրա հարազատներին ու մտերիմներին: Տարիների հետ այդ ամենին զումարվեց նաեւ այն զգացումը, թե կարճ է մարդկային հիշողությունը, եւ կենցաղային դժվարությունների մեջ հաճախ կոխկրտվում, մոռացվում են կենսագրությունները, գործը, նվիրումները:

Այս ամենը բացատրելու համար հարկ է, թերեւս, ամենահամառոտ ձեւով անդրադառնալ, թե ո՞վ էր, այնուամենայնիվ, Կարիկ Պասմաճյանը:

Ծնվել է Երուսաղեմում՝ 1947-ին: Ստեղծագործել սկսել է շատ վաղ տարիքից, իր իսկ բնորոշմամբ՝ անգլիական մաղով ոսնանավորներ էր հավաքում: Բայց ինչպես հաճախ է պատահում հոգու եւ մտքի խորքեր ունեցող մարդկանց մոտ՝ նա էլ անհարմարավետության զգացում ուներ օտար երկրի, միջավայրի ու լեզվի հետ: Եվ 1968-ին Հայաստան եկավ՝ որոնելու իր ետը, արմատներն ու պատկանելությունը: Ուսանեց Երեւանի համալսարանի ժուռնալիստիկայի բաժնում ու այդ չորս-հինգ տարիների ընթացքում մեկընդմիշտ, անդառնալիորեն կապվեց Հայաստանին: Այդ տարիներին էր, որ հրատարակեց բանաստեղծությունների հայերեն առաջին ժողովածուն եւ անմիջապես գրավեց մեր պոեզիայի մեծերի ուշադրությունը: Պարույր Սեւակը, Վահագն Դավթյանը, Գուրգեն Մահարին, Լեւոն Խերսիսյանը եւ էլի շատ շատերը, թեեւ տարիքների զգալի տարբերությանը, դարձան Կարիկի ընկերն ու մտերիմը, որովհետեւ իր իմացությունների խորությամբ, մտածողության ինքնատիպությամբ, բնավորության անսովորությամբ, նա կարողանում էր գրավել մարդկանց, կարողանում էր հետաքրքիր լինել ամենատարբեր միջավայրերի համար:

«Բանաստեղծության խնդիրներում չմահավանության չափ խստապահանջ լինելով՝ ես չեմ կարող այս սուտանդերձ, չավելել ի լուր ամենցուն, որ հանձին Կարիկ Պասմաճյանի համայն հայությունը ստանում է մի նոր, մի իրավ բանաստեղծ: Նա միայն արեւմտահայ կամ արեւելահայ չէ, այլ հայ առանց ստորաբաժանման:

Կարիկ Պասմաճյանը շահեկանորեն զանազանվում է իր սերնդակիցներից. նա թարմ է՝ առանց թարմարարության, նոր է՝ առանց նորարամոլության, թրթռուն՝ առանց ջղաձգության եւ խոհուն՝ առանց խոհարարության», գրել է Պարույր Սեւակը Պասմաճյանի առաջին իսկ ժողովածուի առիթով: Նման գնահատականներ բազմիցս տվել են նաեւ Վահագն Դավթյանը, Վիլյամ Սարոյանը, բազմաթիվ այլ գրողներ ու գրականագետներ:

Համալսարանական ուսումից հետո, բնակության մեկնելով Փարիզ, Պասմաճյանը ոչ հետ որոնումներից, փորձարկումներից ու խճողումներից հետո, վերջապես կարողացավ հասատել իրեն որպես անձ եւ անհասականություն: Բայց ինչ էլ որ փորձեց անել այդ տարիների ընթացքում, ինչի էլ, որ ձեռք զարկեց, ուզեց, որ դա առնչվի Հայաստանին: Վստահաբար, պատճառներից մեկն էլ հենց դա էր, որ սկսեց հավաքել հայկական արվեստի նմուշներ, մասնավորապես գեղանկարչական աշխատանքներ, այդպիսով ստեղծելով իր փոքրիկ Հայաստանը, որն, իր իսկ խոստովանությամբ, դարձել էր իր «հոգանյութը, ապրելու իմաստը»: Հետագայում, դրանց զուգահեռ, նա սկսեց հավաքել նաեւ ռուսական արվեստի ստեղծագործություններ եւ ոչ երկար մի ժամանակահատվածում կարողացավ ստեղծել ռուսական դասական ու ժամանակակից արվեստի լավագույն հավաքածուներից մեկը Արեւմուտքում: Փարիզի կենտրոնում գտնվող Ռասպայ փողոցի նրա պատկերասրահը յուրօրինակ կենտրոն էր դարձել հայ եւ ռուս նկարիչների համար: Այդ տարիներին Պասմաճյանի ուշադրությունն ու բարեհաճությունը շատերն էին փնտրում, որովհետեւ արվեստագետների առջեւ անհիմն, արհեստականորեն բարձացված խորհրդային պատնեշները զրկում էին նրանց բնական կապ պահելու աշխարհի հետ, իսկ Պասմաճյանը մի բացառիկ հնարավորություն էր հաղթահարելու այդ պատնեշները, ցուցադրվելու արվեստների մայրաքաղաքում, շփվելու ժամանակի մեծ արվեստի ու մարդկանց հետ: Իր պատկերասրահում, որ «Գորկի» էր անվանել (հավանաբար Արշիլ Գորկու հիշատակին), նա կազմակերպեց հայ եւ ռուս ժամանակակից տասնյակ գեղանկարիչների ցուցահանդեսներ, հայտնաբերեց բազմաթիվ նոր անուններ, դեռ մի մեծ արվեստ հարթեց շատերի հանդեսից հետո, վերադարձի ճանապարհին նավի վրա բռնկված հրդեհի պատճառով:

Հիշում եմ, թե ինչպես կտավի հանձնման արարողության ժամանակ, նա բազմաթիվ մարդկանց շնորհակալանքին ու հիացումին պատասխանեց պարզ մի նախադասությամբ. «Մարդուն, որն իր տան համար ինչ որ բան է բերել, պետք չէ շնորհակալություն հայտնել»:

Եվ այսպանով հանդերձ, մեղավորության զգացում ուներ հայրենիքից իր ֆիզիկական բացակայության համար: Այդ իրողությունը երբեմն ցավի պես, ողբերգության պես տրոփում էր նրա բանաստեղծություններում. «Ես սիրում եմ քեզ առանց ակնկալության, միակողմանի, ծախող սիրով...»:

Ակնհայտ ճշմարտություն է, որ մեծ տաղանդի յուրահատկություններից մեկն էլ այն է, որ նա կարողանում է կանխազգալ իր ապագան: Ու հիմա, տարիների հեռվից, այնքան էլ զարմանալի չի թվում, թե ինչու ընդամենը 20-22 տարեկան հասակում նա իր համար բանաստեղծություն-տաղանագիր էր գրել. «Աստ հանգչի Կարիկ Պասմաճյան» խորագրով.

«Ճշմարտությունը դեռ շատ է հեռու,
Ինձնից առավել.
Ապրողներ, կորցրել կամ մոռացել եք
Մեռելների ճանապարհը:

Ձեզնից կանուխ բաժանվելուս պատճառը
Միայն սա էր.
Ուզում էի ձեզ ուշ տեսնել մի հիշ.
Իսկ այստեղ եղածների հետ
Դեռ ծանոթություն չեմ հաստատել»:

Այսինքն, գիտեր, որ «կանուխ է հեռանալու», որ «ճշմարտությունը դեռ շատ հեռու է լինելու»...

1988-ի ճակատագրական տարին, երբ Հայաստանը ալեկոծվում էր դարաբաղյան շարժման հզոր ալիքից եւ հայ ժողովուրդն այնքա՛ն զգայուն էր դարձել իրեն տրվող անարդար որակումներից, Կարիկ Պասմաճյանն իր յուրօրինակ մասնակցությունն ունեցավ այդ շարժմանը. առիթ դառնալով հազարավոր մարդկանց զարմանքին ու հիացումին, ստիպելով շատերին գլուխ խոնարհել հայազգի ներկայացուցչի առջեւ: Մի տեսակ մարտահրավեր նետելով՝ նա իր հարցազրույցներում հայտարարում էր, թե պատրաստվում է պատկերասրահ հիմնել Արցախում:

Գուցե, այս ամենը նույնպե՞ս չներվեց նրան...

Թե մոսկովյան, եւ թե լենինգրադյան ցուցահանդեսների բացման արարողությանը, նա ներկաների ուշադրությունը հրավիրում էր ցուցադրանքի կենտրոնում տեղադրված փոքրիկ մի հուշամեդալի վրա, որ ծուլվել էր 1915 մակագրությամբ «ռուսները՝ հայերին փրկության ժամին»:

Այն դժվար օրերին, նա այնպես էր ուզում հավասալ երկու ժողովուրդների բարեկամությանը:

Երեւի այդ հավատով էր, որ 1989-ի հուլիսի 29-ի առավոտյան, դուրս գալով «Ռոսիա» հյուրանոցից՝ առանց որեւէ մեկին զգուշացնելու, առանց երկմտանքի նստել էր իր հետեւից եկած մեզ անհայտ ավտոմեքենան... որից այն կողմ լռություն է:

Եվ այս հոդվածը փորձ է ոչ միայն ինչ որ չափով խախտելու այդ լռությունը, ոչ միայն հիշելու, որ դեկտեմբերի 20-ին Կարիկ Պասմաճյանը դառնում է 50 տարեկան, այլեւ փաստելու, թե ինչ էլ որ պատահած լինի, այնուամենայնիվ, նա կարողացել է իրենից հետո թողնել այնպիսի արժեքներ, որոնք մշտական են դարձնում իր ներկայությունը այս աշխարհի վրա...

ՍԵՅՐԱՆՈՒՀԻ ԳԵՂԱՄՅԱՆ

ՓԱՐԻԶ

Ամիրդովլաթ Ամասիացու աստղաչափիչը ածուրդով կվաճառվի

Շատ հազվագյուտ հայկական մի աստղաչափիչ (աստրոլաբիում), որը 15-րդ դարում պատկանել է նշանավոր բժշկագետ Ամիրդովլաթ Ամասիացուն, այսօր ածուրդի է դրվելու փարիզյան «Դրուո» հյուրանոցում, «Կլոդ Բուաժիրարդ» ֆիրմայի կողմից: Աստղաչափիչը, որ միջին դարերում օգտագործվում էր արեւի եւ աստղերի բարձրությունը որոշելու համար, շինված է պղնձից, ունի 11,8 սմ շրջագիծ եւ 14,4 սմ բարձրություն: Գործիքի վրա փորագրված են հայերեն բառեր, անուններ, ինչպես նաեւ հայկական թվագրություն՝ 928 (1479): Գործիքը կրում է նաեւ սեփականատիրոջ անունը՝ «Ամիր Դովլաթ բժշկին Ամասիացւոյ», ինչպես նաեւ «Զիլմանֆուս» անունը, որ, հավանաբար, գործիքը սարքող արհեստավորինն է:

Այս աստղաչափը, թերեւս, գոյություն ունեցող միակ հայկական գործիքն է իր տեսակի մեջ, եւ հազվագյուտ ու հնագույն մեկ նմուշը հայկական գիտական գործիքների: Սեփականատերը՝ Ամիրդովլաթ Ամասիացին (1425-1496 թթ.) ծնվել է Ամասիայում եւ բժշկությամբ զբաղվել Կոստանդնուպոլսում, որտեղ անձնական բժիշկն է եղել օսմանյան Մեհմեդ Բ սուլթանի: Ունի բժշկագիտական բազմաթիվ գրքեր, որոնցից առավել հայտնի են «Ուսումն բշկութեանը» եւ «Անգիտաց անպէտը»:

Ածուրդում թեեւ նախնական գին չի նշանակված, սակայն մասնագետները աստղաչափի արժեքը գնահատում են մինչեւ 75 հազար դոլար:

Նույն առիթով «Բուաժիրարդ» ֆիրման ածուրդին կներկայացնի հայկական միջնադարյան մետաղադրամներ, ներառյալ՝ հազվագյուտ ոսկեդրամները Լեւոն Ա եւ Հեթում Ա կիլիկյան թագավորների: Նմանապես, ածուրդի նյութ են Վարդան Մախոխյանի 15 յուղանկարները:

Մաղթենք, որ ածուրդի ներկայացված գործերը հանգրվանեն հայկական թանգարաններում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մամուլի ազգային ակումբը, Իրավագետների ու քաղաքագետների միությունը հրավիրում են մասնակցելու «Հայաստանը եւ ընտրությունները» ծրագրի շրջանակներում 1-ին քննարկմանը, որը տեղի կունենա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության դահլիճում դեկտեմբերի 20-ին, ժամը 11:00-ին:

Քննարկման թեման ընտրական հանձնաժողովների կազմավորման սկզբունքներն է:

ՍՍՍՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ
ԻՐԱՎԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ
ՔԱՂԱՔԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

«Հոմանական ոչ մի կրկես.
Ոչ մի պատրիկ ու պատրվակ
Չեն խնայի այլեւս Քեզ.
Պարտված ես, Արիստակես
Մեծ Գլադիատոր ու Դրվագ...»

«Մեկ դերասանի թատրոն»-ը
ներկայացնում է
ԱՐԻՍ ՂԱԶԻՆՅԱՆԻՆ
եւ
«Բնախաղասացիական վարկած»
գրական ուսեսը

Ներկայացումը կկայանա Տիկնիկային թատրոնում դեկտեմբերի 19-ին, ժամը 17^{00}-ին:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԲՈՒՅՔԱՄԱՐՏ

Արթուր Գրիգորյան՝ ինգակի չեմպիոն

Սկիզբը էջ 1

...Եվ ահա բացվում է ափսասասենյակիս դուռը: Ներս է մտնում ժոյացող Վալերի Բաբախանյանը, ձեռին մի մեծ ու հաստ ծրար: Ափսասասենյակում շատ մարդ կար: Նրանցից ոչ ոք բան չգիտեր ափսարհի չեմպիոնի մասին: Վալերին ծրարից հանեց մի գունագեղ հանդես: Շաղիկին վեր ոլորած ձեռքերով ժոյացող մի երիտասարդի գունավոր լուսանկարն էր: Գլխավերևում նա պահել էր ափսարհի չեմպիոնի գոտին: Դա Արթուր Գրիգորյանն էր:

Ծրարի մեջ նաև տեսաժապավեն կար: Վրան գրված էր. «Արթուր Գրիգորյան, պրոֆեսիոնալ մրցամարտեր, ափսարհի առաջնություն»:

Տանը մոտ երեք ժամ ես հեռուստաէկրանին դիտում էի պրոֆեսիոնալ ռինգի մրցամարտերը: Տեսաժապավենում նկարահանված էին ափսարհի չեմպիոնի կոչման համար մղված հինգ եզրափակիչ մենամարտերից չորսը եւ տարբեր հակառակորդների դեմ նախնական հանդիպումների հաստվածներ: Առավել մեծ տպավորություն գործեց առաջին մենամարտը, որը տեղի էր ունեցել Համբուրգում, 1996 թ. ապրիլի 13-ին: Հենց այդ օրը մեկնարկային դարձավ Արթուրի չեմպիոնական կոչումների համար: Այդ օրը նա հանդիպում է «անպարտելի» պուերտոռիկացի Անտոնիո Ռիվերայի հետ: Դրամատիզմով լի մարտը տևեց 12 ռաունդ եւ ավարտվեց անթերի նոկաուտով: Դահլիճում ինչ-որ աներեւակայելի բան էր կատարվում: Հանդիսականները մոլեգնել էին: Մերթ ընդ մերթ ցուցադրում էին հանդիսականների պարզած հայկական դրոշը: Պետք էր տեսնել, թե հյուծիչ մարտից հետո Արթուրն ինչպիսի թեթեւ ցատկով բարձրացավ պարանների վրա եւ, ինչպես ընդունված է պրոֆեսիոնալ բոքսամարտում, օդային համբույրներ հղեց ցնծացող հանդիսականներին:

Կես տարի անց Արթուրը երկրորդ ռաունդում նոկաուտի ենթարկեց ամերիկացի Ջին Ռիդին: Եւս երկու ամիս անց ծանր մրցամարտի 12-րդ ռաունդում հաղթական տարավ ամերիկացի ափսարհի չեմպիոն Մարտի Յակուբովսկու նկատմամբ: 1997 թ. փետրվարին ափսարհի չեմպիոն Արթուր Գրիգորյանի հետ մրցելու նոպատակով Համբուրգ ժամանեց արգենտինական բոքսամարտի արքա Ռաուլ Վալդին: Տեխնիկական նոկաուտով մարտը տանուլ տալով՝ արգենտինացին հետաքրքիր հայտարարություն արեց. «Ես երջանիկ եմ, որ 11 ռաունդ դիմացա առաստելական չեմպիոնի հետ մրցելիս»:

Ես ոչինչ չգիտեմ վերջին մրցամարտի մասին, որն Արթուրին բերեց աննընդմեջ 5-րդ հաղթանակը: Հենց այդ հաղթանակի մասին էլ հեռախոսով Տաշքենդից ինձ հայտնել էր Վալերի Բաբախանյանը: Մինչ Արթուրը պատրաստվում է 6-րդ մրցամարտին, ես որոշեցի հայրենակիցներիս պատմել նրա մասին:

Ասկերանից 20 կմ հեռու, բլրալանջին գտնվում է դարաբաղյան հինավուրց Խանձթ գյուղը: Պատմությունն, ավաղ, մանրամասնություններ չի պահպանել Խանձթի վերաբերյալ: Հայտնի է միայն, որ 1920 թ. այնտեղ բնակվել է 500-ից ավելի մարդ: Իսկ 1989 թ. մարդահամարի համաձայն՝ 248 մարդ: Գյուղի 60 տղամարդիկ քաջաբար զոհվեցին երկրորդ ափսարհամարտի ռազմաճակատներում:

Խանձթը փոքրիկ կետ է ափսարհի քարտեզի վրա: Արցախի բնակավայրերին վերաբերող պատմագիտական գրականության մեջ հետազոտողները նշում են. «Խանձթի բնակիչներն այլի են ընկնում իրենց ափսասասիրությամբ, հյուրասիրությամբ եւ երկարակեցությամբ»: 1941 թ. Ավանեսյանների հինավուրց տոհմում ծնվեց մի տղա, որին անվանեցին Ռազմիկ... Գրիգորյան: Նորածնի հայրը՝ Խաչատուր Ավանեսյանը, անսալով որդի չունեցող աներոջ թախանձանքին, նրա երկրորդ թոռանը տվեց Գրիգորյան ազգանունը: Այդպես էլ երկու հարազատ եղբայրները մեծացան տարբեր ազգանուններով. մեկը Լենսո Ավանեսյան էր, մյուսը՝ Ռազմիկ Գրիգորյան:

Դպրոցն ավարտելուց հետո Ռազմիկն ընդունվեց Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկում: Երկրորդ կուրսից տարան բանակ: Զորացրումից հետո շատերի նման չկարողացավ ափսասանք գտնել Արցախում: Դա էր պատանիների ճակատագիրը: Զորացրվածների մոտ 90 տոկոսը արտի տակ տեղ էր փնտրում օտարության մեջ: Խանձթում ամուսնանալով գեղեցկուհի Քնարիկ Կարապետյանի հետ, Ռազմիկը մեկնեց Տաշքենդ, տեղավորվելով բազմաթիվ հարազատների ու մերձավորների մեջ: Այնտեղ էլ ծնվեցին Ատոմ եւ Արթուր որդիները եւ Ռուզաննա դուստրը: Ապրում էին սփյուռքի բազմահազար հայ ընտանիքների պես: Երեխաներն առողջ էին, լավ էին



„König"
Artur Grigorian

սովորում, հոգսեր չկային: Միակ հոգսը, թերեւս, Արթուրն էր: Այդ համեստ եւ հանդարտ տղան հաճախ կռվում էր հասակակիցների հետ: Ճիշտ է, ուսուցիչները խոստովանում էին. «Ամեն անգամ Արթուրը կռվում էր ոչ թե ինչ-որ մեկի դեմ, այլ հանուն արդարության»: Ծնողներին դադարեցին դպրոց կանչել լոկ այն բանից հետո, երբ 11-ամյա Արթուրին 1978 թ. բոքսամարտի դպրոց ուղարկեցին, հայտնի մարզիչ Լեւ Միխայլովիչ Ահմեջանովի մոտ, որը տղայի մեջ առաջինը նկատեց բնածին մարտիկի աստվածատուր կայծը: Հինգ տարի անց 16-ամյա Արթուր Գրիգորյանն արդարացրեց մարզչի հույսերը՝ դառնալով ԽՍՀՄ պատանիների չեմպիոն: Մարզափարհը խոսեց բոքսամարտի նոր աստղի ծննդյան մասին: Պատանին դարձավ Ուզբեկստանի մարզասերների սիրելին:

Դժվար չէ գուշակել, թե ինչու Արթուրի մարզական հաջողություններին վերաբերող լուրերը համառորեն չէին հասնում Հայաստանի եւ Դարաբաղի լայն զանգվածներին: Դա, թերեւս, ուներ բազմաթիվ օբյեկտիվ պատճառներ: Պատանի Արթուրի փառքի գագաթնակետը ժամանակի առումով համընկավ դարաբաղյան շարժման ամենաթեժ պահին: Բավական է հիշեցնել, որ նա ափսարհի սիրողական առաջնության արծաթե մեդալն ստացավ 1990 թ., իսկ ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ դարձավ 1991 թ.՝ միութենական եւ միջազգային մրցումներում տարած մի շարք փայլուն հաղթանակներից հետո: Ամենամեծ թվով մարտեր նա անցկացրեց 1992, 1993, 1994 թթ.: Դրանք հայերի համար հիրավի խառնակ տարիներ էին, ողբերգություններ, հաղթի ու գրտի ժամանակաշրջան, երբ էլերի տներում էր հեռուստացույց ափսասում:

Սիրողական բոքսամարտում Արթուրն անցկացրել է 387 մարտ՝ տանելով 372 հաղթանակ: Մասնագետների եւ մարզական վիճակագիրների պնդմամբ, տվյալ դեպքում խոսքը յուրօրինակ ռեկորդի մասին է:

1992 թ., արդեն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, տաշքենդցի 25-ամյա բոքսամարտիկը դարձավ թեթեւ քաշային կարգում ԱՊՀ չեմպիոն: Մասնակցեց միջազգային մրցումների: 1993 թ. Գերմանիայի բաց առաջնությունում հաղթանակ տարավ բոլոր 12 մենամարտերում եւ առաջին անգամ դարձավ օտար պետության չեմպիոն: Մեկ տարի անց Արթուրը կրկնեց իր հաջողությունը, եւ համբուրգցի հայտնի մարզիչ Ֆրից Դունեֆսը անմիջապես պայմանագիր կնքեց, որի համաձայն հայ բոքսամարտիկը դարձավ Գերմանիայում պրոֆեսիոնալ ակումբի անդամ: Ֆրից Դունեֆսը Արթուրի երրորդ մարզիչը դարձավ Լեւ Ահմեջանովից եւ Վլադիմիր Շինից հետո: Հաստատվելով Համբուրգում, Արթուրը այնտեղ տարավ ընտանիքը՝ կնոջը եւ երկու դստրիկներին, դարձավ պրոֆեսիոնալ բոքսամարտիկ:

Ես, թերեւս, առաջին անգամ եմ գրում այնպիսի հերոսի մասին, որին անձամբ չեմ հանդիպել: Ինչ արած: Կյանքում ամեն ինչ պատահում է: Ես չեմ կարող չգրել ափսարհի հինգակի չեմպիոն հայրենակցիս մասին, քանզի ինչ-որ անարդարություն կա այն բանում, որ հենց հայրենակիցներիս մեծամասնությունն անտեղյակ է հին ափսարհի առասպելական օլիմպիական չեմպիոն, հայ բազավոր Վարազդատի ժառանգորդի մարզական սխրանքներին:

...Հեռախոսային առաջին զրուցակիցս ափսարհի չեմպիոնի հայրն էր՝ Ռազմիկ Գրիգորյանը: Նա ասաց, որ վերջերս Տաշքենդում Արթուրի մասին գրքույկ է լույս տեսել: Այն սկսվում է Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովի ողջույնի խոսքով եւ Արթուրին «Փառք ափսասանքին» շնորհավորանքով, իսկ մարզչին «Բարեկամություն» շնորհավորանքով պարգեւատրելու հրամանագրով: Ես Ռազմիկին խնդրեցի պատմել այն ազգականների մասին, որոնք մնացել են Արցախում: Պարզվեց, որ մեծավորագույն ազգականներից մեկը բանաստեղծ եւ երգահան Գուրգեն Գաբրիելյանն է: Ռազմիկի քույր Գենոֆիան բնակվում է Ստեփանակերտում: Ազգականներից շատերը մասնակցել են Արցախի ազատամարտերին: Ռազմիկն ինձ տվեց որդու համբուրգյան հեռախոսահամարները: Մեկ ժամ անց ես արդեն զրուցում էի Արթուրի կնոջ՝ Օլգայի հետ: Պարզվեց, որ Արթուրը մարզումների է գնացել: Կես ժամ էլ չէր անցել, երբ երկար հեռախոսազանգ հնչեց: Արթուր Գրիգորյանն էր: Երկար խոսեցինք: Խնդրեցի պատմել իր վիրահատության մասին: Պարզվեց, որ այն հաջող է անցել:

Տեսաժապավենի վրա նկատել էի, որ Արթուրի հետեւում Ուզբեկստանի դրոշն է: Գիտեի, որ ափսարհի առաջնությունում առաջին հաղթանակից հետո նա իր ձեռնոցները նվիրել է Ուզբեկստանի նախագահին: Ուզբեկստանում ապրում են բազմահազար հայ ընտանիքներ: Արթուրը նշեց, որ ինքը երբեք չի դավաճանի հայերին ապաստան տված Ուզբեկստանին: Միեւնույն ժամանակ, նա իր մարզիչների եւ մենեջերների առջեւ քանիցս հարց է բարձրացրել, որպեսզի կարողանա հանդես գալ միանգամից երկու՝ ուզբեկական եւ հայկական դրոշների ներքո: Սակայն պարզվել է, որ Ուզբեկստանում եւ Հայաստանում երկքաղաքացիություն չկա: Երբեմն ինքը դահլիճում հայկական դրոշ է տեսնում, որը բերած է լինում հանդիսականներից մեկը: Այդ ժամանակ Արթուրին թվում է, թե իրեն նայում է ամբողջ Հայաստանը:

Ես խոստացա, որ Արթուրի չեմպիոնական 6-րդ մրցամարտը կամ անձամբ կմեկնեմ դիտելու, կամ էլ անդամ կմեկնեմ դիտելու, կամ էլ անդամ մի խումբ մարզասերների ուղեւորություն կկազմակերպեմ հայկական եւ դարաբաղյան դրոշներով:

Արթուրն ասաց, որ այդ դեպքում ինքը երջանիկ կլինի: Երբեմն արդեն խորհում է այն մասին, թե երբ է ավարտելու մրցելույթները, որպեսզի վերադառնա Դարաբաղ, այնտեղ ակումբ հիմնի եւ դաստիարակի նոր չեմպիոններ: Հաստատես վերջին տարիներին դարաբաղցիներն իրենց անկոտրում ոգով շատ են ուժ տվել Արթուրին:

Ես վայր դրեցի հեռախոսափողը, խորհելով այն անանց ճշմարտության մասին, որ ամեն մարդու հոգում իր ժողովրդի մանրակերտ պատկերն է:

ՀԱՄՄԱՍ

Վլադիմիր Հակոբյանի մրցախաղում հավասարություն է

Հոլանդիայի Գրոնինգեն քաղաքում անցկացվող ափսարհի շախմատի առաջնությունում սկսվեցին չորրորդ փուլի մրցախաղերը: Հայաստանի չեմպիոն Վլադիմիր Հակոբյանը սպիտակներով իր առաջին հանդիպումն անցկացրեց Իսպանիայի ներկայացուցիչ Ալեքսեյ Շիրովի հետ: Երեւանցի գրոսմայստերը նախընտրեց չդիմել ռիսկի հետ կապված կտրուկ գործողությունների, հին հնդկական պաշտպանությունում ծավալվեց դիրքային հանդարտ պայքար, եւ 30-րդ քայլում մրցակիցները հաշտություն կնքեցին: Հակոբյան-Շիրով մենամարտի հաղթողը, վիճակահանության համաձայն, 5-րդ փուլում պետք է հանդիպի Անանդ-Ալմաշի մրցախաղում ուժեղագույն ճանաչված գրոսմայստերի հետ: Այս շախմատիստների առաջին պարտիայում հաղթեց Անանդը: Նույն օրը Բելյավսկին պարտության մատնեց Շորին, Վան Վելին՝ Գեորգիեւին: Հաշտություն կնքեցին Գելֆանդն ու Տկաչովը, Ազմայփարաշվիլին ու Կրասենկովը, Զվյագինցեւն ու Դրեեւը, Ադամսն ու Սվիդլերը:

Ափսարհի առաջնությունը՝ «Շախմատային Հայաստանում»

Երեկ լույս տեսած «Շախմատային Հայաստան» հանդեսի հատուկ թողարկումը ամբողջովին նվիրված է Գրոնինգենում անցկացվող ափսարհի շախմատի առաջնությանը: Զետեղված են մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչների խաղացած բոլոր պարտիաները եւ առաջին չորս փուլերի առավել հետաքրքիր այլ հանդիպումներ, ինչպես նաեւ բազմաթիվ լուսանկարներ, ծաղրանկարներ, տեղեկատու նյութեր: «Շախմատային Հայաստանը» կիրատարակի Գրոնինգենի, իսկ ապա նաեւ Լոզանի մրցաշարին նվիրված եւս մի քանի հատուկ թողարկումներ:

Կաննում պայքարը մոտենում է ավարտին

Մեկ տուր է մնացել մինչեւ Ֆրանսիայի Կաննի քաղաքում անցկացվող ափսարհի շախմատի պատանեկան առաջնության ավարտը: Եզրագծի շեմին Հայաստանի պատվիրակներից համեմատաբար բարձր ցուցանիշ ունի ափսարհի մինչեւ 14 տարեկան պատանիների անցյալ տարվա չեմպիոն Գաբրիել Սարգսյանը, որը 10 հնարավորից վաստակել է 7 միավոր եւ պահպանում է մրցանակային տեղ գրավելու տեսական հնարավորություններ: Բենիկ Գալստյանը (12) ունի 6,5, Տաթեւիկ Աբրահամյանը (10) 6, Արմեն Անտինյանը (10) 5, Տիգրան Ղարամյանը (14) 4,5 միավոր: Գ. Հ.

ՈՒՆԳՈ

Գավաթի անդրանիկ խաղարկությունը

Թալինում առաջին անգամ անցկացվեց ռինգո մարզաձեւի Հայաստանի ֆեդերացիայի գավաթի խաղարկությունը:

Մրցումներին մասնակցեցին 14 թիմերի 39 մարզիկներ:

Թիմային մրցումներում գավաթը նվաճեցին Արմավիրի մարզի Քարակերտի թիվ 2 դպրոցի մարզիկները. հաղթողներ դարձան Գարիկ Գեւորգյանը (մինչեւ 10 տ.), Արմեն Պողոսյանը (11-13 տ.տ.), Սիրեկան Պետրոսյանը (14-15 տ.տ.) Էդգար Սահակյանը (16-18 տ.տ.) եւ Վաղարշակ Կնյազյանը (19-35 տ.տ.):

Լայլ կազմով Սիրեկան Պետրոսյան, Արմեն Պողոսյան եւ Արթուր Մելոյան:

Անհատական մրցումներն անկայացան հետեւյալ խմբերով:

Հաղթողներ դարձան Գարիկ Գեւորգյանը (մինչեւ 10 տ.), Արմեն Պողոսյանը (11-13 տ.տ.), Սիրեկան Պետրոսյանը (14-15 տ.տ.) Էդգար Սահակյանը (16-18 տ.տ.) եւ Վաղարշակ Կնյազյանը (19-35 տ.տ.):

ՖՈՒՏԲՈԼ

Նախնական խաղերն ավարտվեցին

Սաուդյան Արաբիայի էր Ռիադ քաղաքում անցկացվող «Կոնֆեդերացիայի գավաթի» խաղարկությունում որոշվել են կիսաեզրափակիչ հանդիպումների բոլոր մասնակիցները: Այդ բանը հայտնի դարձավ «Բ» խմբում վերջին երրորդ տուրի խաղերից հետո:

Հետաքրքիր անցավ Ուրուգվայ-Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն հանդիպումը: Ուրուգվայցիները, որոնք դեռ վերջին տուրից առաջ հաջորդ փուլ էին դուրս եկել, երկրորդ խաղակեսի սկզբին առջեւում էին (3-1), սակայն Աֆրիկայի չեմպիոնները կարողացան հավասարեցնել հաշիվը: Այնուամենայնիվ, Ուրուգվայի ֆուտբոլիստները եւս մի գոլ խփեցին ու շահեցին հանդիպումը՝ 4-3:

Եվրոպայի փոխչեմպիոն Չեխիայի հավաքականի բացահայտ առավելությամբ ընթացավ Արաբական Միացյալ Էմիրությունների թիմի հետ խաղը: Հաղթելով 6-1 հաշվով՝ չեխ ֆուտբոլիստները նվաճեցին կիսաեզրափակիչի երկրորդ ուղեգիրը: Այս խաղում մրցակցի դարպասը երեք անգամ գրավեց հավաքականի ավագ Շմիցերը: Ի դեպ, նա եւս երկու գոլ էր խփել ՀԱՀ-ի թիմի դարպասը:

Ահա թե խմբերում ինչ հերթականությամբ տեղեր գրավեցին մրցաշարի մասնակիցները:

Ա խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
Բրազիլիա	3	2	1	0	6-2	7
Ավստրալիա	3	1	1	1	3-2	4
Մեխիկա	3	1	0	2	8-6	3
Ս. Արաբիա	3	1	0	2	1-8	3

Բ խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
Ուրուգվայ	3	3	0	0	8-4	9
Չեխիա	3	1	1	1	9-5	4
ԱՄԷ	3	1	0	2	2-8	3
ՀԱՀ	3	0	1	2	5-7	1

Հետաքրքիր է, որ Ֆրանսիա-98-ի մասնակից չորս հավաքականներից միայն ափսարհի հառակի չեմպիոն Բրազիլիայի թիմը կարողացավ հաջորդ փուլ դուրս գալ:

Այժմ կանցկացվեն կիսաեզրափակիչ խաղերը: Կհանդիպեն Բրազիլիա-Չեխիա եւ Ուրուգվայ-Ավստրալիա զույգերը: Ռ. Հ.

ՖՈՐՄՈՒԼԱ-1

Ինչպիսի՞ն կլինի մրցաշրջանը

Ավտոպարտի «Ֆորմուլա-1» դասի ափսարհի 1998 թվականի առաջնությունը կանցկացվի հինգ ափսարհամասերում: Այն բաղկացած կլինի 16 փուլերից: Ինչպես Մոնտե Կառլոյից հաղորդում է ԱՊ գործակալությունը, «Ֆորմուլա-1»-ը կմեկնարկի մարտի 8-ին Ավստրալիայում, իսկ եզրափակիչ փուլը «Շաղոնիայի մեծ մրցանակը», կլինի նոյեմբերի 1-ին: Որոշ փուլերի անցկացման վայրերը դեռ ճշգրտվում են:

ԱԶԳ

Օրվա հետքով

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ

Եվրամիություն-Թուրքիա լարվածությունը վերածվում է առճակատման

ԱՄՆ-ում շարունակվում է վարչապետ Մեսուտ Յըլմազի այցը

Եվրամիություն-Թուրքիա հարաբերությունների լարվածությունը առճակատման երանգ է ստանում: Իսկ դրա պատասխանատվությունը ԵՄ-ին հասցեագրված մեղադրական սուր ելույթներով գիտակցաբար վերցնում է վարչապետ Մեսուտ Յըլմազը: Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 12-ին Լյուքսեմբուրգում Եվրամիության գագաթաժողովը որոշում էր կայացրել Թուրքիայի անդամակցությունը թեկնածու երկրների ցուցակից հանելու մասին: Ի պատասխան դրան Յըլմազը սպառնացել էր բոյկոտի ենթարկել Եվրոպական համաժողովը, որն առաջիկա գարնանը հրավիրվելու է Լոնդոնում, եւ միաժամանակ մերժել էր ԵՄ-ի դեկավարների ճակերույթին մասնակցելու հրավերը: Մինչդեռ գագաթաժողովի նախօրյակին Յըլմազի Լյուքսեմբուրգյան հանդիպումները հուսադրող էին: Ուստիւ հիասթափությունն էլ համարժեք մեծ եղավ:

Դեկտեմբերի 14-ին Յըլմազը վերադարձավ Անկարա, ընդունելություն խնդրեց նախագահ Սուլեյման Դեմիրելից, հանդիպումից հետո հրավիրեց նախարարների խորհրդի նիստ, ավարտին հայտարարեց, որ Թուրքիան այսուհետեւ սառեցնում է հաղորդակցությունը ԵՄ-ի հետ: Յըլմազի հայտարարությունը Թուրքիայի տեսանկյունից ենթադրում է ԵՄ Սամսային միության դայմանագրի կանոնների տրամաբանության տրամաբանության սահմանափակում, «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» հետ տնտեսական, հաղորդակցական եւ ռազմական ինտեգրացիայի արագացում, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի ընդարձակման դեմ խոչընդոտների հարուցում: Ամերիկյան մամուլը ելնելով անդամակցության հարցում Վաշինգտոնի կողմից Թուրքիային ցուցաբերվող անվերապահ աջակցությունից, Լյուքսեմբուրգյան գագաթաժողովի որոշումը գնահատեց որպես հարված ԱՄՆ-ի հեղինակությանը:

Ինչ վերաբերում է եվրոպական երկրներին, ապա դրանց ղեկավարները Թուրքիային կոչ արեցին վերանայել ԵՄ-ի հետ հաղորդակցության որոշումը: Բանի որ այդ որոշումը նախորդել էր ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտգործնախարարների խորհրդաժողովին, որ գումարվեց Բրյուսելում, մասնակիցներին մտավախություն էր դրսեւորել Թուրքիայի կողմից վետոյի իրավունքի օգտագործման հավանականությունը: Թեեւ արտգործնախարար Իսմայիլ Ջեմը գերծ մնաց նման քայլից, սակայն դա դեռ Թուրքիայի դիրքորոշման մեղմացում չէր նշանակում: Դեկտեմբերի 15-ին, երբ ՌԴ վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը Անկարայում էր, եւ նրա այցը թուրքական թերթերում բնութագրվում էր որպես ազդանշան եվրոպական երկրներին, Յըլմազը հանկարծ Եվրամիությանը նույնացրեց Բեռլինի դատի հետ: Սուլեյման Դեմիրելը եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Հիքմեթ Չեթինը զգուշացրին նրան, որ գերծ մնա ԵՄ-ի դեմ կոչ արտահայտություններից: Նախազգուշացումը սակայն, հակառակ արդյունք ցույց տվեց: Ոչ միայն արտահայտությունները չմեղմացան, կոշտացավ նաեւ Յըլմազի դիրքորոշումը: Նույնիսկ նախագահ Բիլ Քլինթոնի «կարեկցական աջակցությունը» ի զորու չեղավ չափավորելու նրան: Եվրոպական երկրների հակազդեցության դայմաններում շեշտակի սրվեց Եվրամիություն-Թուրքիա փոխհարաբերությունների լարվածությունը: Ահա այս դայմաններում սկսվեց Յըլմազի չորսօրյա աշխատանքային այցը ԱՄՆ: Երբ ուղեւորվում էր Նյու Յորք, Քլինթոնը հեռաձայնային անգամ հանդես եկավ ասելով. «Թուրքիան խիստ կարեւոր է մեզ համար: Անհրաժեշտ է հետամուտ լինել նրա կառուցողական հետագա ամրապնդմանը Արեւմուտքի հետ»: Քլինթոնին լրացնելու եկավ պետքարտուղար Մադլեն Օլբրայթը, թե «Թուրքիան դեռ է որ անդամակցի ԵՄ-ին»:

Դեկտեմբերի 17-ին դեռի Նյու Յորք ուղեւորվելիս Յըլմազի ինքնաթիռը վառելանյութի լցավորման համար վայրէջք էր կատարել Բրյուսելում, որտեղ էլ նա հարցերի տեղատարափի տակ դատասխանելով լրագրողներին, նշել էր, որ Եվրամիությանը վեց ամիս ժամանակ է տալիս, որպեսզի վերանայի Թուրքիային անդամակցության երկրների ցուցակից հանելու Լյուքսեմբուրգյան գագաթաժողովի որոշումը: «Դժբախտաբար, շարունակել էր Յըլմազը, գագաթաժողովում հաղթեց նրանց տեսակետը, ովքեր ԵՄ-ը դատկերացնում են որպես քրիստոնեական ակումբ: Ինքնանվաղատության հերթը հիմա ԵՄ-ինն է»: Յըլմազն այնուհետեւ ընդգծել էր, որ Թուրքիան դատշաճաղես հետ կվերցնի Եվրամիությանն անդամակցելու իր դիմումը, եթե նրան մինչեւ հաջորդ գագաթաժողովը չընդգրկեն թեկնածուների ցուցակում: Երբ մի լրագրող Յըլմազին հիշեցրել էր Կլաուս Քինկելի խոսքերը, թե «ԵՄ-ը բանանային հանրապետություն չէ», Յըլմազն ասել էր. «Ես չեմ ասել, թե բանանային հանրապետություն է, Քինկելը դարգարտես բարբաջանք է դուրս տալիս»: Իսկ «Եվրոպական առաջիկա համաժողովին Թուրքիան մասնակցելո՞ւ է» հարցին նրա դատասխանը ավելի կտրուկ էր. «Եվրոպական համաժողովը ինքնախաբեություն է: Քանի դեռ ես վարչապետ եմ, Թուրքիան դրան չի մասնակցի»:

Դեկտեմբերի 18-ին Յըլմազը Նյու Յորքում հանդիպեց թուրքական համայնքի ներկայացուցիչներին, այնուհետեւ մասնակցեց Ամերիկայի հրեական միությունների ճակերույթին, ինչի ավարտին նրան հանձնեցին «ականավոր դետական գործչի» մրցանակը: Մինչ Յըլմազը, դրան արժանացել էին Ռիչարդ Հոլբրուկն ու Մադլեն Օլբրայթը:

Համենայն դեպս, վարչապետ Յըլմազը Նյու Յորքում տնտեսության գծով դետնախարար Գյունեշ Թաների ուղեկցությամբ բանակցություններ վարեց Միջազգային արժութային ֆոնդի ու Համաշխարհային բանկի ղեկավարության հետ: Դրանով էլ ավարտվեցին նրա նյույորքյան հանդիպումները: Այսօր Վաշինգտոնում Յըլմազին է ընդունելու նախագահ Բիլ Քլինթոնը, այնուհետեւ նա հանդիպելու է դետքարտուղար Օլբրայթի հետ: Նրա այցը ԱՄՆ-ում դեռ շարունակվում է: Վաղ է խոսել այցի արդյունքների մասին, առավել եւս ամփոփիչ դրանք: Կասկածից վեր է սակայն, որ ԵՄ-Թուրքիա փոխհարաբերությունները որպես առաջնահերթ խնդիր, կազմելու են Յըլմազի բանակցությունների առանցքը:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

Թուրք իսլամական նոր՝ Առաքինության կուսակցություն

ԱՆԿԱՐԱ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Թուրք իսլամականները, չսպասելով երկրի նախկին վարչապետ Նեջմեթթին Էրբաքանի գլխավորած «Բարօրություն» կուսակցությունը փակելու մասին Սահմանադրական դատարանի որոշմանը, ստեղծել են նոր կուսակցություն՝ Առաքինության կուսակցություն: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, այդ մասին այսօր հաղորդել է Թուրքիայի խորհրդարանի դատգամավորներից մեկը: Չորեքշաբթի օրը, ասել է նա, նոր կուսակցության 34 հիմնադիրներ Առաքինության կուսակցություն ստեղծելու մասին դատշաճական դիմում էին ներկայացրել: Նրանց թվում են «Բարօրություն» կուսակցության իրավաբաններ, ինչպես նաեւ Էրբաքանին մոտ կանգնած մարդիկ: Սպասվում է, որ նոր կուսակցությունը կշարունակի «Բարօրության» իսլամամետ քաղաքականությունը: Թուրքիայի մայրաքաղաքի քաղաքական շրջանակներում այն կարծիքին են, որ իսլամականները ցանկանում են խուսափել նոր կուսակցության՝ որպես «Բարօրություն» կուսակցության իրավահաջորդի նկատմամբ ավելորդ ուշադրությունից, քանզի նրա ճակատագիրը դեռեւս չի որոշված: Պատգամավորի կարծիքով, այն դեպքում, եթե Թուրքիայի Սահմանադրական դատարանը «Բարօրություն» կուսակցությունը փակելու որոշում ընդունի, երկրի 550-տեղանոց խորհրդարանի իսլամական դատգամավորները «սահուն կմտնեն» նոր կուսակցության շարքերը:

Ադրբեջանցի ոստիկանապետը՝ գող

ԼՈՆԴՈՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ. Ադրբեջանի Լենքորան քաղաքի ոստիկանապետ Խոսրով Շամիեւը կնոջ հետ Լոնդոնի ամենաթանկ՝ «Հերոդս» սուպերմարկետում փորձել է «բռնցնել» 2 հազար ֆունտ ստեռլինգի ապրանք եւ բռնվել է: Ինչպես հաղորդեցին Ադրբեջանի դեսպանությունում, դատարանը Շամիեւներին տուգանել է 4 հազար ֆունտ ստեռլինգով, եւ ուրբաթ օրը Լենքորանի «գլխավոր ոստիկանը» կվերադառնա Բաքու:

Robin Generators RGX3500

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

բենզինով աշխատող միաֆազ էլեկտրագեներատորներ:

☎ 529353

հզորություն	մեխ. հզ.	նոմ. հզ.	աշխ. ժամ	արտադ.
50 հց	3.0 կվտ	2.5 կվտ	7.1 ժ	13 լ
60 հց	3.5 կվտ	3.0 կվտ	6.1 ժ	

Հայաստանի հանձնաժողովական հիմնադրամը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԱՆԸ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ին ժ. 12.00-24.00
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՆ
ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՐՔԻ ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ
ՆՊԱՍՏՆԵՐ
ՐՐ եւ ԼՂՐ ԶՈՐԿԱԾ ԵՎ 1 ԿԱՐԳԻ ՀԱՇՄԱՆԴԱՄ
ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ
ԵՐԱԳԻՐ ՀԱՄԱՐ

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ուղղակի մուտքով դեկտեմբերի 27-ին Կամերային երաժշտության տանը

խոստում-հայտարարություն հեռախոսով 52.64.74, 58.07.82, 52.09.40, 56.01.06, 58.33.94, 58.73.92 կամ. 59.44, 64.08

փոխանցում «Հայաստան» համաձայնական հիմնադրամի ՀՀ ԿԲ 10300321 5672 հաշվին

Դեկտեմբերի 1-31-ը կատարված բոլոր մուտքերն հաստատված են այս գրագրին

ԲԱՐԻ ԳՈՐԾՈՎ ԳԻՄԱՎՈՐԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Չեյթունում 3 սենյականոց բնակարան, Դեկաբրիստների 10 ս., 27 բն., քարե շենքի 5/1-ում, վերանորոգված, այգի, 2 նկուղ:
Հեռախոս՝ 53-52-59
Տրամվայի գծի ուղղությամբ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«CH» անշարժ գույքի գործակալությունն իր ծառայություններն է առաջարկում բնակարան գնել կամ վաճառել ցանկացողներին:
Հասցեն Բաքինյան 53 շենքի դիմաց: ՀԱՀ, Բ-1 թաղամասի «դիսպետչերանոցի» մոտ:
Հեռ. 73-61-14

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան
(Դավիթաշեն, II թաղամաս, 3-րդ շենք, բն. 4):
Զանգահարել 72-89-83

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կազմակերպությունը վաճառում է յուղային եւ անյուղ, անարաս կաթի փոշի:
Շահագրգիռ կազմակերպություններին եւ անհատներին խնդրում ենք զանգահարել 273015 կամ 220925 հեռախոսահամարներով:

Քաջի արագ, արդյունավետ եւ անվտանգ նվազեցում:
Մասնագետի խորհրդատվություն:
Զանգահարել
22-04-90 ժամը 9-11-ը եւ 20-22-ը:

Հարգելի ընթերցող

Հայաստանի Հանրապետության կառի նախարարության «Կոնտակտ» պետական ձեռնարկությունը հիշեցնում է, որ հանրապետությունում տպագրվող թերթերի եւ ամսագրերի 1998 թ. առաջին կիսամյակում բաժանորդագրության վերջին ժամկետը դեկտեմբերի 22-ն է:

Այդ ժամկետից հետո բաժանորդագրվողները թերթերը եւ ամսագրերը կստանան փետրվարից:

Նաեւ հիշեցնում ենք, որ շարունակվում է Ռուսաստանում, համագործակցության երկրներում եւ հեռավոր արտասահմանում տպագրվող թերթերի եւ ամսագրերի բաժանորդագրությունը 1998 թ. փետրվարից եւ հետագա ամիսներից ստանալու համար:

Հրավիրում ենք նաեւ ուսանողներին եւ թոշակառուներին արտոնյալ գներով բաժանորդագրվելու:

Բաժանորդագրությունը կատարվում է հանրապետության բոլոր փոստային բաժանմունքներում, իսկ փոխանցման կարգով երեւանի համար 2 փոստային բաժանմունքում (Սարյան փող., 22, բարձրահարկ շենքի 1-ին հարկում):

Շտապեք բաժանորդագրվել:

Հեռ. 53-80-06, 53-38-02, 71-66

«ԿՈՆՏԱԿՏ» ՊԵՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (589167, 581351) - պարբերաբար հրատարակվող տեղեկագրերով - մագնիսական սկավառակներով - INTERNET ցանցով (http://www.arminco.com/spyur)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Պատճեն 729 Տպաքանակը 3000 Ստորագրված է տպագրության 18.12.1997 Գինը 100 դրամ